

**ՇՐՋԱԿԱՍ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ԳՆԱՀԱՏՄԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Նախատեսվող գործունեության անվանումը՝

**«ԶՊՄԿ» ՓԲԸ-ին պատկանող արտադրական  
տարածքում/հրապարակում արտադրական պահեստի  
կառուցում»**

**Ձեռնարկող՝**

**«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ**  
(ՀՀ Սյունիքի մարզ, ք. Քաջարան, Լեռնագործների 18)

Գլխավոր տնօրենի տեղակալ՝

Ա. Նիկողոսյան

03.03.2025թ.



## Բովանդակություն

1.	Ընդհանուր տեղեկություններ.....	5
2.	Հասպավումներ.....	6
3.	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը.....	7
4.	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մոտեցումները և մեթոդաբանությունը.....	7
4.1	ՇՄԱԳ նպատակը.....	7
4.2	ՇՄԱԳ հաշվետվության կազմը.....	8
4.3	ՇՄԱԳ մեթոդաբանությունը.....	8
4.3.1	Ընդհանուր դրույթներ.....	8
4.3.2	ՇՄԱԳ արդյունքում հաշվառման ենթակա ազդեցությունների բաղադրիչները.....	8
4.3.3	ՇՄԱԳ հիմնական փուլերը.....	9
4.3.4	Ուսումնասիրության շրջանակի որոշումը.....	9
4.3.5	Ելակետային իրավիճակի ուսումնասիրությունը.....	9
4.3.6	Ազդեցության գնահատումը և մեղմացումը.....	10
4.3.7	Կառավարումը և մշտադիտարկումը.....	14
4.4	Օգտագործվող տեղեկատվական աղբյուրները.....	14
5.	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական շրջանակները.....	15
6.	Նախատեսվող գործունեության բնութագիրը.....	20
6.1	Նոր արտադրական պահեստ.....	21
6.2	Օժանդակ շինություններ.....	23
6.3	Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կոնստրուկտիվ լուծումները.....	25
6.3.1	Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ.....	26
6.3.2	Էլեկտրամատակարարման համակարգ.....	26
6.3.3	Անվտանգության ապահովում.....	26
6.4	Սանիտարապաշտպանիչ գոտի.....	27
6.5	Արտադրական և օժանդակ շինությունների կառուցման նյութաձախսը.....	28
7.	Այլընտրանքային տարբերակները, դրանց վերլուծությունը և ընտրված տարբերակի հիմնավորումը.....	33
8.	Շրջակա միջավայրի նկարագիրը.....	36
8.1	Տարածքի ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը.....	36
8.2	Գեոմորֆոլոգիան, ռելիեֆը և լանդշաֆտը.....	37
8.3	Հողերի բնութագիրը.....	39
8.4	Տեկտոնիկան, սեյսմակայունությունը, սելավա և սողանքաանվտանգությունը.....	41
8.5	Երկրաբանական կառուցվածքը.....	42
8.6	Հիդրոերկրաբանական պայմանները.....	43

- 8.7 Մակերևութային ջրեր.....45
- 8.8 Կլիմա .....47
  - 8.8.1 Ջերմաստիճանը.....48
  - 8.8.2 Օդի խոնավությունը.....48
  - 8.8.3 Մթնոլորտային տեղումները.....48
  - 8.8.4 Ձյան ծածկույթը.....49
  - 8.8.5 Անբարենպաստ եղանակային պայմանները.....49
  - 8.8.6 Քամիները.....49
- 8.9 Մթնոլորտային օդի աղտոտվածությունը.....51
- 8.10 Տարածաշրջանի հատուկ պահպանվող տարածքները.....53
- 8.11 Պատմամշակութային հուշարձաններ և բնության հուշարձաններ.....54
- 8.12 Կենդանական և բուսական աշխարհը.....54
- 8.13 Քաջարան խոշորացված համայնքի սոցիալ-տնտեսական պատկերը.....56
  - 8.13.1 Ընդհանուր տվյալներ.....56
  - 8.13.2 Քնակչությունը.....56
  - 8.13.3 Ժողովրդագրությունը.....56
  - 8.13.4 Ֆնտեսությունը.....57
  - 8.13.5 Կրթությունը և մշակույթը.....57
  - 8.13.6 Խնտուր և կենցաղային սպասարկում.....58
  - 8.13.7 Տրանսպորտ և կապ.....58
  - 8.13.8 Տնտեսություններ և հանրային սնունդ.....58
  - 8.13.9 Զբոսաշրջության, կոմունալ և այլ ծառայություններ.....58
  - 8.13.10 Բնական և համայնքային ծառայություն.....58
- 9. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը.....59
  - 9.1 Նպատակը.....59
  - 9.2 Ընդհանուր դրույթներ.....59
  - 9.3 Կիրառվող մեթոդակարգը.....59
  - 9.4 Ելակետային տվյալները.....60
    - 9.4.1 Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման հիմնական աշխատանքները.....60
  - 9.5 Մթնոլորտային արտանետումների հաշվարկման մեթոդաբանությունը.....63
    - 9.5.1 Փոշու արտանետումների հաշվարկի մեթոդակարգը.....64
    - 9.5.2 Տրանսպորտային միջոցների և տեխնիկայի վառելիքի ծախսի որոշման մեթոդակարգը.....64
    - 9.5.3 Տրանսպորտային միջոցների և շինարարական տեխնիկայի գազանման արտանետումների հաշվարկի մեթոդակարգը.....65
    - 9.5.4 Ներկանյութերի օգտագործման արդյունքում մթնոլորտ արտանետվող նյութերի հաշվարկի մեթոդակարգը.....66

- 9.6 Նախատեսվող գործունեության բաղադրիչների կառուցման փուլերում ջրապահանջի և ջրահեռացման հաշվարկման մեթոդակարգը .....67
- 9.7 Նախատեսվող գործունեության բաղադրիչների իրականացման ժամանակ (կառուցման փուլ) կանխատեսվող մթնոլորտային արտանետումները.....68
- 9.8 Նախատեսվող գործունեության իրագործման փուլերում մթնոլորտային արտանետումների գումարային ազդեցությունը.....82
- 9.9 Ջրօգտագործման և ջրահեռացման հաշվարկը .....82
  - 9.9.1 Ծինարարական աշխատանքների ջրցանման ջրապահանջը.....82
  - 9.9.2 Աշխատողների կոմունալ-տնտեսական ջրապահանջի հաշվարկը .....83
  - 9.9.3 Կառուցման փուլի ընդհանուր ջրապահանջը.....83
  - 9.9.4 Կառուցման փուլի կեղտաջրերի հաշվարկը .....83
- 9.10 Ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա.....84
- 9.11 Թափոնների առաջացումը և կառավարումը .....84
- 9.12 Վտանգավոր նյութերի կառավարումը.....85
- 9.13 Կենդանական և բուսական աշխարհի վրա ազդեցությունը.....85
- 9.14 Անտառային ռեսուրսների վրա ազդեցությունը .....86
- 9.15 Արտակարգ իրավիճակներին պատրաստվածությունը .....86
- 9.16 Աղմուկի և թրթռման ազդեցությունը.....86
- 9.17 Նախատեսվող գործունեության ազդեցությունը տարածաշրջանի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա.....87
- 9.18 Նախատեսվող գործունեության ազդեցությունը պատմամշակութային հուշարձանների վրա .....88
- 10. Ծրջակա միջավայրին հասցված տնտեսական վնասի գնահատումը.....88
  - 10.1 Մթնոլորտային օդ.....88
  - 10.2 Հողային ռեսուրսներ.....89
  - 10.3 Ջրային ռեսուրսներ .....90
- 11. Նախատեսվող գործունեության մշտադիտարկման պլանը .....91
- 12. Առաջարկվող մեղմացնող բնապահպանական և սոցիալական միջոցառումների պլանը.....92
  - ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ .....98

## 1. Ընդհանուր տեղեկություններ

1.1	Պատվիրատու՝	, Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ՝ ՓԲԸ (, ՉՊՄԿԷ ՓԲԸ կամ ՉՊՄԿ կամ Կոմբինատ)
1.2	Ձեռնարկող՝	, ՉՊՄԿԷ ՓԲԸ
1.3	Ձեռնարկողի կոնտակտային տվյալները	
	- Հեռախոսը՝	<a href="tel:+37460500003">+374-60-500003</a>
	- Էլ. փոստը՝	<a href="mailto:info@zcmc.am">info@zcmc.am</a>
	- Կայքը՝	<a href="http://www.zcmc.am">www.zcmc.am</a>
	- Հասցե՝	Հայաստան, 3309 Սյունիքի մարզ, Քաջարան, Լեռնագործների փող., 18 ենթ
1.4	Գործունեության տեսակը՝	Հանքաարդյունահանում
1.5	Վարչական տարածքը՝	ՀՀ. Սյունիքի մարզ, Քաջարան բազմաբնակավայր համայնք
1.6	Նախագծող կազմակերպություններ՝	
	, Արտադրական պահեստի և օժանդակ շենքի կառուցում՝ աշխատանքային նախագծերի համար	, Լեռնամետալուրգիայի Ինստիտուտ՝ ՓԲԸ Լիցենզիա № 1763
1.7	Ծրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման բաժնի նախագծող՝	, ԷՅ ԹԻ ԷՄ ԷՍ Սոլյուշնս՝ ՍՊԸ

## 2. Հապավումներ

ԲԲԸ՝	Բաց Բաժնետիրական Ընկերություն
ՓԲԸ՝	Փակ Բաժնետիրական Ընկերություն
ՓԾ՝	Փրկարարական Ծառայություն
ՔԿԱԳ՝	Քաղաքացիական կացության Ակտերի Գրանցման Գործակալություն
ԱՊԿՊ՝	Արտակարգ Պատահարների Կառավարման Պլան
ՍՊԸ՝	Մահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն
ՍԹԿ՝	Մահմանային Թույլատրելի Կոնցենտրացիա
ՊՈԱԿ՝	Պետական Ոչ Առևտրային Կազմակերպություն
ՀՀ՝	Հայաստանի Հանրապետություն
ՀՓՁ՝	Հրշեջ Փրկարար Ջոկատ
ՇՄԱԳ՝	Շրջակա Միջավայրի վրա Ազդեցության Գնահատում
ԱՊԿՊ՝	Արտակարգ Պատահարների Կառավարման Պլան

### 3. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

, Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ (այսուհետ՝ , ՉՊՄԿԷ կամ Կոմբինատ) գտնվում է Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) հարավ-արևելյան մասում, Սյունիքի մարզում, Քաջարան բազմաբնակավայր համայնքի վարչական տարածքում, Կապան մարզկենտրոնից դեպի արևմուտք 30 կմ հեռավորության վրա: Կոմբինատի կազմում ներառված են հանքավայրը (բացահանքը) իր լցակայանային տնտեսությամբ, հարստացուցիչ ֆաբրիկան և Արծվանիկի պոչամբարը:

Հանքավայրի շահագործումը մեկնարկել է 195թվականից և մինչև 1954թվականը հանքարդյունահանումը իրականացվել է ստորգետնյա, իսկ 1954-ից մինչև 1962թվականները համակցված եղանակով (ստորգետնյա և բաց): 1962թվականից հանքավայրի շահագործումն իրականացվում է միայն բաց եղանակով: 2016թվականին Կոմբինատը ձեռք է բերել 22 մլն. տ/տարի արդյունահանման թույլտվություն (պետական փորձաքննական № ԲՓ 108 դրական եզրակացություն հաստատված 2016թվականի դեկտեմբերի 16-ին):

Աշխատանքային նախագծով նախատեսվում է նոր արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցում (տես **Նկար 6.1-ը**):

Նոր արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման նախագծերը կազմվել են , Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲԸ և , Լեռնամետալուրգիայի ինստիտուտ ՓԲԸ միջև կնքված , Աշխատանքների կատարման մասին պայմանագրի շրջանակներում:

Նոր արտադրական պահեստի և օժանդակ շինությունների ընդհանուր մասկերը **6845.5<sup>2</sup> է**:

, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է , ԱԷ կատեգորիայի և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ սույն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է , ԲԷ կատեգորիայի շարքին, սակայն եթե այն դիտարկենք, որպես ընդերքօգտագործման ոլորտի գործունեություն ապա Ա կատեգորիա և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

### 4. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մոտեցումները և մեթոդաբանությունը

#### 4.1 ՇՄԱԳ նպատակը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող բնապահպանական ազդեցությունը շրջակա և սոցիալական միջավայրի բաղադրիչների վրա (օդային, և ջրային ավազաններ, հողային ռեսուրսներ, առաջացող թափոններ, կենսաբազմազանություն, պատմամշակութային վայրեր և այլն), վերլուծել ու գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելման, նվազեցման և/կամ մեղմացման, ինչպես նաև մշտադիտարկման անհրաժեշտ միջոցառումներ:

Գնահատման նպատակն է նաև նույնականացնել հնարավոր սոցիալական ազդեցությունները և օգուտները, նախատեսել գործունեության դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման միջոցառումները:

## 4.2 ՇՄԱԳ հաշվետվության կազմը

ՇՄԱԳ հաշվետվության կազմը և բովանդակությունը համապատասխանում է գործող , Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի (03.03.028-խմբագրություն) 15րդ հոդվածի պայմաններին և մշակված է հաշվի առնելով նախատեսվող գործունեության առանձնահատկությունները:

## 4.3 ՇՄԱԳ մեթոդաբանությունը

### 4.3.1 Ընդհանուր դրույթներ

Սույն ՇՄԱԳ հաշվետվությունում կիրառված շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մեթոդաբանությունը հիմք է հանդիսանում նախատեսվող գործունեության հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները բնութագրելու համար: Այն հիմնված է ազդեցությունների գնահատման համար սովորաբար օգտագործվող մոդելների վրա և հաշվի է առնում ՇՄԱԳ ոլորտում թե ՀՀ օրենսդրական պահանջները և թե միջազգային կարգավորումներն ու լավագույն գործելակերպերը:

ՇՄԱԳ գործընթացը համակարգված մոտեցում է նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ազդեցությունները բացահայտելու և դրանց նվազեցմանն ու մեղմացմանը միտված միջոցառումները սահմանելու համար: Այն թույլ է տալիս կայացնել հիմնավորված որոշումներ նախատեսվող գործունեության իրականացման առաջարկների վերաբերյալ և հնարավորություն է տալիս ներգրավված շահագրգիռ կողմերին մասնակցել ՇՄԱԳ գործընթացին:

### 4.3.2 ՇՄԱԳ արդյունքում հաշվառման ենթակա ազդեցությունների բաղադրիչները

ՇՄԱԳ գործընթացում իրականացվում է ազդեցության գնահատում շրջակա միջավայրի հետևյալ բաղադրիչների/կլանիչների վրա, այդ թվում նաև համատեղ կամ փոխազդեցության արդյունքում՝

- 1) Մթնոլորտային օդ,
- 2) Ջրային ռեսուրսներ,
- 3) Հողային ռեսուրսներ,
- 4) Երկրաբանություն և հիդրոերկրաբանություն,
- 5) Կենսաբազմազանություն (բուսական և կենդանական աշխարհ),
- 6) Էկոհամակարգեր և էկոհամակարգային ծառայություններ,
- 7) Հատուկ պահպանվող տարածքներ,
- 8) Լանդշաֆտ,
- 9) Պատմամշակութային հուշարձաններ,
- 10) Հանրության առողջություն և բնակչության կենսամակարդակ:

Այն դեպքերում, երբ նախատեսվող գործունեությունը կարող է ազդեցություն ունենալ բնության հատուկ պահպանվող տարածքների վրա, ՇՄԱԳ գործընթացում նաև գնահատվում է ազդեցությունը համապատասխան բնական համալիրների, ներառյալ հատուկ պահպանվող բնական տարածքների, ինչպես նաև այլ նշանակության հողերի և պետական բնաարգելոցային ֆոնդի օբյեկտների վրա:

ՇՄԱԳ ընթացքում գնահատման են ենթարկվում նաև այն ազդեցությունները, որոնք կարող են առաջանալ մարդածին և բնական բնույթի արտակարգ իրավիճակների ու շրջակա միջավայրի վթարային աղտոտման արդյունքում: Այդ դեպքում սահմանվում են հնարավոր միջոցներն ու



մեթոդները՝ կանխելու և նվազեցնելու նախատեսվող գործունեության վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև բնապահպանական մշտադիտարկման անհրաժեշտ ծավալը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում հաշվի են առնվում շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա բացասական և դրական ազդեցությունները:

#### 4.3.3 ՇՄԱԳ հիմնական փուլերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի հիմնական փուլերն են՝

- Ուսումնասիրության շրջանակի որոշումը,
- Ելակետային իրավիճակի ուսումնասիրությունը,
- Ազդեցության գնահատումը և մեղմացումը,
- Կառավարումը և մշտադիտարկումը:

#### 4.3.4 Ուսումնասիրության շրջանակի որոշումը

Ուսումնասիրության շրջանակի հիմնական խնդիրն է որոշել այն հարցերի ու գործոնների կազմը և ծավալը, որոնք պետք է դիտարկվեն ՇՄԱԳ գործընթացում: Այն հիմնված է նախատեսվող գործունեության փուլերի և բաղադրիչների նախնական վերլուծության վրա և հիմք է ստեղծում բնապահպանական և սոցիալական հնարավոր ազդեցությունների նույնականացման և ազդակիր կողմերի ներգրավածությունն ապահովելու համար: Ուսումնասիրության շրջանակի որոշումը թույլ է տալիս կենտրոնանալ նախատեսվող գործունեության նշանակալի ազդեցությունների, այլընտրանքային տարբերակների և այլ կարևոր խնդիրների վրա:

Շրջանակագծումը իրականացվում է նախատեսվող գործունեության բոլոր կենսափուլերին առնչվող գործողությունների համապարփակ վերլուծության արդյունքում որոշելու՝ շրջակա միջավայրի վրա կանխատեսվող բնապահպանական և սոցիալական ազդեցությունները և դրանց հնարավորությունը փոխազդել (դրական կամ բացասական առումով) շրջակա (ֆիզիկական, կենսաբազմազանության մշակութային) և սոցիալական միջավայրի բաղադրիչների/ կլանիչների հետ:

#### 4.3.5 Ելակետային իրավիճակի ուսումնասիրությունը

Նախատեսվող գործունեության ազդեցությունների նույնականացմանն ու գնահատմանը նախորդում է ազդակիր տարածաշրջանի ֆիզիկական, կենսաբանական, մշակութային և սոցիալ-տնտեսական ելակետային իրավիճակի նկարագրությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է ունենալ ելակետային բնապահպանական, սոցիալական և սոցիալ-տնտեսական պայմանների վերաբերյալ համապարփակ տվյալներ, որոնք կարելի է ձեռք բերել ելակետային տեղեկատվության (առաջնային և երկրորդային) հավաքագրման գործընթացում:

Երկրորդային ելակետային տվյալները հավաքագրվում են նախատեսվող գործունեության նախագծի, ինչպես նաև ազդակիր տարածաշրջանի վերաբերյալ առկա և հասանելի տեղեկատվական աղբյուրներից, քարտեզներից, փաստաթղթերից, ինչպես նաև ազդակիր և շահագրգիռ կողմերից: Սույն ՇՄԱԳ գործընթացում օգտագործված տեղեկատվության ստացման աղբյուրները ներկայացված են **Բաժին 4.4**-ում:

Անհրաժեշտության կամ տվյալների/տեղեկատվության սակավության դեպքում, երկրորդային ելակետային տեղեկատվությունը պետք է լրացվի դաշտային հետազոտությունների ընթացքում հավաքագրված առաջնային տվյալներով: Այդ դաշտային հետազոտությունները հիմնականում ներառում են՝

- Կենսաբազմազանության (բուսական և կենդանական աշխարհ) ուսումնասիրությունները,
- Հողային և ջրային ռեսուրսների աղտոտվածության որոշումը,
- Օդի ֆոնային աղտոտվածության որոշումը (հիմնականում փոշ, SO<sub>2</sub> NO<sub>2</sub> CO),
- Ֆոնային աղմուկի և թրթռման մակարդակների որոշումը,
- Սոցիալ տնտեսական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և հարցազրույցներ:


**4.3.6 Ազդեցության գնահատումը և մեղմացումը**

ՇՄԱԳ գործընթացում նույնականացված ազդեցությունները ենթակա են ամբողջական գնահատման՝ դիտարկելով հետևյալ չորս գործոնները՝

- Ազդեցության կանխատեսում,
- Ազդեցության գնահատում,
- Մեղմացում և բարելավում,
- Մնացորդային ազդեցությունների գնահատում:

Ազդեցության գնահատման գործընթացի հերթականությունը ներկայացված է **Նկար 4.1**-ում:

**Նկ. 4.1. Ազդեցության գնահատման գործընթացի սխեմատիկ պատկերը**



Ազդեցության կանխատեսումը

Ազդեցությունների կանխատեսումը փորձագիտական վարժություն է՝ որոշելու, թե ինչ կարող է տեղի ունենալ շրջակա միջավայրի հետ նախատեսվող գործունեության և/կամ դրանով պայմանավորված գործողությունների/առանձնահատկությունների հետևանքով: Տարբեր բաղադրիչների/կյանիչների վրա ազդեցությունները նույնականացվում և վերլուծվում են նախատեսվող գործունեության շրջանակների որոշման ընթացքում հնարավոր նշանակալի փոխազդեցություններից: Ազդեցության գնահատման գործընթացում դիտարկվող հնարավոր ազդեցությունների շրջանակը սովորաբար հանգեցնում է կիրառման ենթակա կանխատեսման (քանակական, կիսաքանակական և որակական) մեթոդների ընտրությանը:

Ազդեցության գնահատումը

Բնապահպանական և սոցիալական ազդեցությունները առաջանում են նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով և կամ ուղղակիորեն փոխազդում են կլանիչների հետ, կամ անուղղակիորեն փոփոխում են առկա միջավայրը/բաղադրիչը: Ազդեցությունները կարող են նկարագրվել և քանակականացվել մի քանի եղանակով: Այս ուսումնասիրության ընթացքում ֆիզիկական, կենսաբանական, մշակութային և սոցիալական միջավայրի տարբեր բաղադրիչների վրա ներգործող ազդեցությունները գնահատվում են նախատեսվող գործունեության ամբողջ կենսացիկլի ընթացքում ըստ հետևյալ բնութագրերի՝

- Ուղղվածությունը՝ դրական կամ բացասական,
- Տեսակը՝ ուղիղ, անուղղակի, մնացորդային,
- Ուժգնությունը՝ բարձր, միջին, ցածր, անտեսվող,
- Հավանականությունը՝ բարձր, միջին, ցածր,
- Տևողությունը՝ ժամանակավոր, կարճաժամկետ, երկարաժամկետ, մշտական,
- Դարձելիությունը՝ դարձելի կամ անդարձելի,
- Նշանակալիության աստիճանը՝ նշանակալի, չափավոր, ցածր, անտեսվող:

Ազդեցությունների հիմնական բնութագրերը սահմանված են **Աղյուսակ 4.1**-ում:

**Աղյուսակ 4.1. Ազդեցությունների բնութագրերը**

<b>Ազդեցության բնութագիրը</b>	<b>Սահմանումը</b>
<b>Տեսակը</b>	<p><b>Ուղիղ ազդեցություններ՝</b> առաջանում է նախատեսվող գործունեության և միջավայրի բաղադրիչի/կլանիչի միջև անմիջական փոխազդեցությունից:</p> <p><b>Անուղղակի ազդեցությունները</b> առաջանում է նախատեսվող գործունեության և միջավայրի բաղադրիչի/կլանիչի միջև հետագա փոխազդեցությունների հետևանքով:</p> <p><b>Մնացորդային ազդեցությունները</b> սահմանվում են որպես այն ազդեցությունները, որոնք մնում են առաջարկվող մեղմացման միջոցառումների իրականացումից հետո:</p>
<b>Տևողությունը</b>	<p><b>Ժամանակավոր (շատ կարճ տևողությամբ)</b> ազդեցությունները կարող են լինել վեց ամսից ավելի կարճ տևողությամբ, բնույթով ընդհատվող կամ պատահական են և դարձելի: Բաղադրիչը կամ կլանիչը ընդունում է իր սկզբնական վիճակը, երբ ազդեցությունը դադարում է կամ կարճ ժամանակ անց:</p> <p><b>Կարճաժամկետ (կարճ տևողությամբ)</b> ազդեցություն, երբ այն հավանաբար կսահմանափակվի մինչև երեք տարի ժամկետում:</p> <p><b>Երկարաժամկետ (միջին տևողությամբ)</b> ազդեցությունները կշարունակվեն բավականին երկար և հիմնված են այն գիտակցման վրա, որ ժամանակի ընթացքում հնարավոր կլինի միջավայրի բաղադրիչի վերականգնում մինչև լավագույն հասանելի նախազործունեության վիճակ:</p> <p><b>Մշտական (երկար տևողությամբ)</b> ազդեցություն, երբ այն առկա է նախատեսվող գործունեության ամբողջ կենսացիկլի ընթացքում, իսկ ազդակիր բաղադրիչը կամ կլանիչը ենթարկվում է մշտական բնույթի փոփոխության:</p>
<b>Ուժգնությունը</b>	<p><b>Անտեսվող</b>, երբ ազդեցությունը գրեթե չի ազդում միջավայրի ելակետային իրավիճակի վրա:</p> <p><b>Ցածր</b>, երբ ազդեցությունը թեթև փոփոխություն է թողնում միջավայրի ելակետային իրավիճակի վրա:</p>

<b>Ազդեցության բնութագիրը</b>	<b>Սահմանումը</b>
	<p><b>Միջին</b>, երբ ազդեցությունը հանգեցնում է փոփոխությունների, որոնք սակայն գտնվում են գործող նորմերի/սահմանաքանակների շրջանակում կամ առաջացնում են միջավայրի բաղադրիչների որոշակի անհանգստություններ:</p> <p><b>Բարձր</b>, երբ ազդեցությունը հանգեցնում է փոփոխությունների, որոնք ազդում են ավելի մեծ տարածքների վրա կամ ցուցաբերում են բաղադրիչների/կյանիչների վրա ավելի մեծ ճնշումներ:</p>
<b>Հավանականությունը</b>	<p><b>Ցածր</b>, երբ ազդեցությունը քիչ հավանական է, սակայն, կարող է տեղի ունենալ իրականացման արդյունքում:</p> <p><b>Միջին</b>, երբ ազդեցությունը հավանական է, որ տեղի կունենա իրականացման արդյունքում:</p> <p><b>Բարձր</b>, երբ ազդեցությունը տեղի կունենա իրականացման արդյունքում:</p>

Երբ որ ազդեցության ուժգնությունը և հավանականությունը բնութագրվում է, դրա նշանակալիության աստիճանը որոշվում է **Նկար 4.2**-ում բերված մատրիցի կիրառմամբ:

**Նկ. 4.2. Ազդեցության նշանակալիության մատրից**

		<i>Հավանականություն / տևողություն</i>		
		Ցածր	Միջին	Բարձր
<i>Ուժգնություն</i>	Անտեսվող	Անտեսվող	Անտեսվող	Անտեսվող
	Ցածր	Անտեսվող	Ցածր	Չափավոր
	Միջին	Ցածր	Չափավոր	Նշանակալի
	Բարձր	Չափավոր	Նշանակալի	Նշանակալի

Եթե ազդեցության տևողությունը երկարաժամկետ կամ մշտական է, քայց հավանականությունը ցածր է կամ միջին, ապա ազդեցության նշանակալիությունը գնահատվում է մեկ քայլ ավելի բարձր:

Դրական ազդեցության դեպքում ուժգնությունը չի սահմանվում: Ազդեցության գնահատման նպատակով բավարար է համարվում նշել, որ նախատեսվող գործունեության արդյունքում ակնկալվում է դրական ազդեցություն՝ չբնութագրելով դրական փոփոխության ճշգրիտ աստիճանը, որը հավանական է որ տեղի կունենա:

Ծրջակա միջավայրի և սոցիալական բաղադրիչների վրա ազդեցությունների նշանակալիության բնութագիրը նկարագրված է **Աղյուսակ 4.2**-ում:

**Աղյուսակ 4.2. Ազդեցության նշանակալիության բնութագիրը**

<b>Ազդեցությունների նշանակալիությունը</b>	<b>Նկարագիրը</b>	
	<b>Ծրջակա միջավայրի բաղադրիչներ</b>	<b>Սոցիալ-տնտեսական բաղադրիչներ</b>
Անտեսվող	Ազդեցությունները գործնականում չեն փոխում շրջակա միջավայրի ելակետային իրավիճակը, տեղային են և ժամանակավոր կամ կարճաժամկետ:	Ելակետային իրավիճակի էական փոփոխություններ չեն ակնկալվում տարածքում նույնիսկ կարճաժամկետ կտրվածքով: Նշանակալի անհարմարություններ չեն առաջանում:
Ցածր	Տարածքի, տեղական և տարածա-շրջանային ազդեցություններ, որոնք չեն ուղեկցվում միջավայրի բաղադրիչների/	Կարճաժամկետ անհարմարություններ մարդկանց և հանրության համար, որոնք առաջանում են նախատեսվող

**"Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ**

<b>Ազդեցությունների նշանակալիությունը</b>	<b>Նկարագիրը</b>	
	<b>Շրջակա միջավայրի բաղադրիչներ</b>	<b>Մոցիալ-տնտեսական բաղադրիչներ</b>
	կլանիչների երկարաժամկետ վատթարացմամբ: Հետևանքները սովորաբար դարձելի են և փոքր (չեն պահանջում հատուկ մեղմացնող միջոցառումներ): Սովորաբար չեն գերազանցում սահմանված չափորոշիչները (օրինակ՝ օդի, ջրի և հողի որակ, աղմուկ, թրթռում և այլն):	գործունեության իրականացման արդյունքում, սակայն, առանց կենսամակարդակի կամ կյանքի որակի փոփոխության վրա երկարաժամկետ հետևանքների: Կլանիչները կամ հեշտությամբ հարմարվում են փոփոխություններին կամ նախկին ապրուստի միջոցները պահպանվում են:
Չափավոր	Տարածքի և շրջակա միջավայրի վրա տեղական ազդեցություններ, հիմնականում երկարաժամկետ: Ազդեցություններ, որոնք չեն ազդում կրիտիկական բաղադրիչների վրա, սակայն հանգեցնում են կենսաբազմազանության և կենսավայրերի անդարձելի կորստի: Ազդեցություններ տարածաշրջանային կտրվածքով, որոնք պահպանվում են 4-ից 3 տարի և պահանջում են ողջամիտ ծախսեր մեղմացնող միջոցառումներ իրագործելու համար:	Ուղիղ և անուղղակի ազդեցություններ տեղական համայնքների կամ անհատների կենսապահովման և կյանքի որակի վրա: Կլանիչները կարող են որոշակի դժվարություններ կրել՝ հարմարվելու փոփոխություններին և նրանք կարող են վերադառնալ իրենց նախկին ապրուստին՝ որոշակի աջակցություն (օրինակ՝ փոխհատուցում) ստանալու պայմանով:
Նշանակալի	Տարածաշրջանային և ավելի մեծ մասշտաբի զգալի ազդեցություններ՝ միջնաժամկետ, երկարաժամկետ և մշտական ազդեցություններ, որոնք հանգեցնում են անդարձելի փոփոխությունների և ելակետային պայմանների վատթարացմանը: Սովորաբար ունենում են բացասական ազդեցություններ, որոնք գերազանցում են բնապահպանական ազգային ստանդարտները կամ կապված են անդրսահմանային բնապահպանական խնդիրների հետ, ներառյալ թունավոր նյութերի հետևանքները և ազդեցությունները, որոնք կապված են կրիտիկական բաղադրիչների/կլանիչների վրա հնարավոր արտակարգ իրավիճակների առաջացմամբ:	Լայնորեն տարածված անբարենպաստ ուղիղ և անուղղակի ազդեցություններ ինչպես անհատների, այնպես էլ տեղական համայնքների վրա, որոնք գործնականում չեն կարող մեղմվել կամ փոխհատուցվել: Ազդեցության ենթարկված կլանիչները չեն կարողանում հարմարվել փոփոխություններին կամ շարունակել նախկին ապրուստը:
Դրական	Շահավետ ազդեցություն կունենա միջավայրի բաղադրիչի/կլանիչի վրա	Շահավետ ազդեցություն կունենա միջավայրի բաղադրիչի/կլանիչի վրա

Մեղմացումը և բարելավումը

ՇՄԱԳ գործընթացի հիմնական նպատակն է ուսումնասիրության ընթացքում նույնականացված հնարավոր նշանակալի ազդեցություններից խուսափելու, նվազեցնելու կամ դրանք մեղմելու գործնական ուղիների հատկորոշումն է: Կոչվում են մեղմացման միջոցառումներ և ներառվում են նախատեսվող գործունեության նախագծի մեջ որպես պարտավորություններ: Մեղմացման նպատակն է կանխարգելել, նվազագույնի հասցնել կամ կառավարել նշանակալի բացասական ազդեցությունները որքանով որ ողջամտորեն հնարավոր է և օպտիմալացնել և առավելագույնի

հասցնել նախատեսվող գործունեության իրականացումից հնարավոր օգուտները/ հնարավորությունները, որտեղ կիրառելի է:

Մեղմացնող տարբերակների հիերարխիան դիտարկվում է սկզբնաղբյուրում ազդեցությունից խուսափելու նախընտրությամբ, իսկ ամենաանցանկալի տարբերակը մնացորդային ազդեցությունների համար փոխհատուցման տրամադրելն է:

Նախատեսվող գործունեության նախագծային փաստաթղթերում ներկայացված ֆիզիկական կամ ընթացակարգային վերահսկման և մշտադիտարկման գործողությունները դիտարկվում են որպես նախագծային փաթեթի բաղկացուցիչ մաս և չեն ներառվում սույն ՇՄԱԳ հաշվետվության համապատասխան բաժիններում:

ՇՄԱԳ գործընթացում մշակված բոլոր մեղմացնող միջոցառումները ամփոփվում են նախատեսվող գործունեության համար մշակված բնապահպանական կառավարման պլանում և առնչվում են նախատեսվող գործունեության բոլոր կենսացիկլերին: Այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում վերահսկել նախատեսվող գործունեության հետևանքները միջավայրի բաղադրիչների/կլանիչների վրա, մշակվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկման (մոնիտորինգի) ծրագիր:

Մնացորդային ազդեցությունների գնահատումը

Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները նույնականացնելուց հետո դրանց նշանակալիությունը գնահատվում է հաշվի առնելով առաջարկվող մեղմացման միջոցառումները: Վերջիններս կիրառվում են ազդեցությունները հնարավորինս ցածր մակարդակի հասցնելու համար, որոնք որպես կանոն ամբողջությամբ չեն վերանում: Մնացած ազդեցությունները հանդիսանում են մնացորդային: ՇՄԱԳ գործընթացի նպատակներից մեկն է հասկանալ մեղմացնող միջոցառումների ձեռնարկման արդյունքում մնացորդային ազդեցությունների նշանակալիությունը և նախատեսել պատշաճ մշտադիտարկում և չափումներ:

**4.3.7 Կառավարումը և մշտադիտարկումը**

Ազդեցության գնահատման գործընթացի վերջնական փուլում սահմանվում են կառավարման և մշտադիտարկման հիմնական միջոցառումները՝ պարզելու համար, թե արդյոք. ա) մնացորդային ազդեցությունները կամ դրանց հետ առնչվող նախատեսվող գործունեության բաղադրիչները գտնվում են սահմանված ստանդարտների շրջանակներում և բ) մեղմացնող միջոցառումներն արդյունավետորեն անդրադառնում են ազդեցություններին, իսկ փոխհատուցման միջոցառումներն ու փոխհատուցումները նվազեցնում են ազդեցությունները կանխատեսված չափով:

**4.4 Օգտագործվող տեղեկատվական աղբյուրները**

ՇՄԱԳ գործընթացում օգտագործվել են հետևյալ փաստաթղթերը և տեղեկատվական աղբյուրները՝

- 1) , Լեռնամետալուրգիայի ինստիտուտ՝ ՓԲԸ կողմից մշակված նոր արտադրական պահեստի և օժանդակ շենքի "Ինժեներական կոմունիկացիաներ և սարքավորումներ", "Ինժեներական ցանցեր և սարքավորումներ", "Ճարտարապետա-շինարարական մաս", "Հրդեհային անվտանգության միջոցառումներ", "Արտադրական պահեստի և օժանդակ շենքի նախագիծ", "Նախահաշվային փաստաթղթեր", "Շինարարության կազմակերպման նախագիծ", "Վտանգավոր արդյունաբերական օբյեկտների անվտանգության միջոցառումներ" նախագծային փաստաթղթերը,

- 2) Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հողի, ջրի, մթնոլորտային օդի լարորատոր փորձարկումների արդյունքները, կենսաբազմազանության և հնեագիտական ուսումնասիրությունների հաշվետվությունները,
- 3) Նախատեսվող գործունեության տարածաշրջան այցելությունների ընթացքում հավաքագրված տվյալները և տեղեկատվությունը,
- 4) Տարածաշրջանին կիրառելի այլ հաշվետվություններ, վերլուծություններ, քարտեզներ,
- 5) Նախագծերի շահագրգիռ և ազդակիր կողմերի հետ բովանդակային խորհրդակցությունները և քննարկումները:

## 5. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նորմատիվաիրավական շրջանակները

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության հիմնական պահանջները սահմանված են ~~21.06.20~~ ~~2023~~ թվականին վերախմբագրված ~~03.06.2023~~ թվականին, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ~~ՀՀ~~ ~~ՀՀ~~ օրենքով: Այն կարգավորում է շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի և նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները:

### «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը

Օրենքը նկարագրում է Հայաստանում տարաբնույթ ծրագրերի և գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) և բնապահպանական փորձաքննության գործընթացները: Օրենքում օգտագործվող հիմնական սահմանումները բերված են հողված 4-ում: Օրենքի հիմնական առարկաներն են՝

- Հիմնադրությամբ փաստաթուղթ՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթուղթ (ռազմավարություն, հայեցակարգ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, պլան, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) կամ փաստաթղթի փոփոխություն՝ հաստատված Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների այլ իրավական ակտերով:
- Նախատեսվող գործունեությունը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում նշված գործունեության տեսակներ, 6-րդ և 7-րդ մասերով սահմանված գործունեություն, իսկ սույն օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված կարգով նախատեսված դեպքերում՝ նաև դրանց վերակառուցում կամ ընդլայնում կամ տեխնիկական կամ տեխնոլոգիական վերազինում կամ վերապրոֆիլավորում կամ կոնսերվացում կամ տեղափոխում կամ դադարեցում կամ փակում, ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտների դեպքում՝ շահագործումից հանում (ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտ հանդիսացող գերեզմանոցի դեպքում՝ փակում) կամ քանդում կամ նախագծային փոփոխություն:

Օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է գնահատման և փորձաքննության նպատակն ու խնդիրները, իսկ 7-րդ հոդվածը թվարկում է ՇՄԱԳ և փորձաքննության գործընթացում դիտարկվող շրջակա միջավայրի օբյեկտները և բնութագրերը: Օրենքի Գ-րվա 2-ը (8-1 խոդվածները) նկարագրում է գնահատման և փորձաքննության գործընթացների մասնակիցների իրավասությունները:

12րդ հոդվածը թվարկում է ԾՄԱԳ և փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների տեսակները, որոնք ըստ ոլորտների դասակարգվում են ,ԱԷ և ,ԲԷ կատեգորիաների՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի:

Նախատեսվող գործունեությունը դիտարկելով, որպես ընդերքօգտագործման բնագավառի գործունեություն դասվում է , ԱԷ կատեգորիայի շարքին և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Օրենքի 15րդ հոդվածը սահմանում է ԾՄԱԳ հաշվետվության բովանդակությունը՝ նախատեսվող գործունեության ԾՄԱԳ հաշվետվության ներկայացվող պահանջները: 17րդ հոդվածի 15րդ կետը սահմանում է ԾՄԱԳ փորձաքննության ժամկետները, համաձայն որի՝ նախատեսվող գործունեության , ԱԷ կատեգորիայի դեպքում ԾՄԱԳ փորձաքննության ժամկետը մինչև 80, իսկ , ԲԷ կատեգորիայի դեպքում՝ մինչև 40 աշխատանքային օր:

Օրենքի 28րդ հոդվածը սահմանում է շահագրգիռ հանրության ծանուցումը և հանրային լուսմների իրականացումը: Նշված հոդվածի համաձայն նախատեսվող գործունեության ԾՄԱԳ և փորձաքննության ընթացքում անցկացվում է երկու հանրային լուսմ: Առաջին հանրային լուսմն իրականացվում է սույն օրենքի 16րդ հոդվածով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նախնական համաձայնության տրամադրման փուլում, իսկ երկրորդը՝ սույն օրենքի 17րդ հոդվածով սահմանված փորձաքննության ընթացքում: Օրենքի 29րդ հոդվածը սահմանում է հանրային լուսմների իրականացման և առաջարկությունների ներկայացման կարգը:

Հանրային ծանուցումը և քննարկումները իրականացվում են 19.12014-ի ՀՀ կառավարության Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին №1325-Ն որոշմամբ:

ՀՀ Հողային օրենսգիրքը (2004) սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը: Համաձայն Օրենսգրքի ՀՀ հողային ֆոնդը դասակարգվում է ըստ հետևյալ կատեգորիաների. 1) գյուղատնտեսական նշանակության, 2) բնակավայրերի, 3) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, 4) էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների, 5) հատուկ պահպանվող տարածքների, 6) հատուկ նշանակության, 7) անտառային, 8) ջրային և 9) պահուստային հողերի:

Օրենսգրքի գլուխ 13ը սահմանում է հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց իրավունքները, այդ թվում. հողամասն օգտագործման տրամադրելը (անհատույց (մշտական) օգտագործման կամ վարձակալության իրավունքով), հողամասի կառուցապատման իրավունքը, հողամասի նկատմամբ իրավունքների սահմանափակումները և հողամասի սերվիտուտը: Օրենսգրքի գլուխ 15ը նկարագրում է պետության և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման ընթացակարգը:

ՀՀ ջրային օրենսգրքի (2002) հիմնական նպատակն է սահմանել երկրի ջրային ռեսուրսների պաշտպանության իրավական հիմքերը, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով բավարարել քաղաքացիների և տնտեսական ոլորտների ջրային կարիքները և պահպանել ջրային ռեսուրսները ապագա սերունդների համար: Օրենսգիրքը կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

**Ջրակառավարչության սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման**



**չափորոշիչների մասին օրենսգիրքը (2005.)** սահմանում է սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները՝ բացառությամբ բնակչության կողմից խմելու, առողջարարական նպատակներով օգտագործվող ջրային ռեսուրսների սանիտարական պահպանման գոտիների տարածքների սահմանման չափորոշիչների, որոնք սահմանում է առողջապահության պետական լիազորված մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**ՀՀ ընդերքի մասին օրենսգիրքը (2010.)** սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորում է ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները: Ըստ Օրենսգրքի, ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում իրականացվում են հետևյալ փորձաքննությունները՝ **1** ընդերքաբանական, **2** շրջակա միջավայրի վրա ազդեցության և **3** տեխնիկական անվտանգության:

**ՀՀ անտառային օրենսգիրքը (2006.)** կարգավորում է Հայաստանի Հանրապետության անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

**Մթնոլորտային օդի պահպանության մասին** ՀՀ օրենքի (1994թ., վերախմբավորվել է **2022**-ին) կարգավորում է կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները: Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների թույլտվությունների ստացման կարգը և մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները սահմանվում են ՀՀ կառավարության **04.02024**թ.-ի «**Մթնոլորտային օդի աղտոտող (վնասակար) նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագծերի մշակման և սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների նախագիծ ներկայացրած իրավաբանական անձանց և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձանց արտանետման թույլտվությունների տրամադրման կամ մերժման կամ ուժը կորցրած ճանաչելու մասին կարգը հաստատելու մասին**» **№32-Ն** և **0202.2006** «**Բնակավայրերում մթնոլորտային օդի աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների - ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին**» **№160-Ն** որոշումներով:

**Թափոնների մասին** ՀՀ օրենքը (**2004**) սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքի **3**րդ գլուխը նկարագրում է թափոնների նորմավորման, հաշվառման, անձնագրավորման ընթացակարգերը: Օրենքում ներկայացված են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները, ինչպես նաև թափոնների գործածության ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի կիրարկումն ապահովվում է մի շարք կառավարության որոշումների և բնապահպանության նախարարի հրամաններով: Մասնավորապես

արտադրության և սպառման թափոնների դասակարգումը, ըստ վտանգավորության դասի իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարի **2610.2006**ի «ՀՀ տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» №342-Ն հրամանի համաձայն:

**Աղբահանության և սանիտարական մաքրման մասին** ՀՀ օրենք (2001 թ.) սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

**Լիցենզավորման մասին** ՀՀ օրենքը (2001 թ.) սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և կարգավորում է լիցենզավորման հետ կապված հարաբերությունները: Օրենքի հոդված 43<sup>ք</sup> սահմանում է լիցենզավորման ենթակա գործունեությունների տեսակների ցանկը: Մասնավորապես, հոդված 43<sup>ք</sup> կետ 1<sup>ի</sup> (Անվտանգության բնագավառ) համաձայն, պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր և պայթեցման աշխատանքների կատարումը հանդիսանում է լիցենզավորման ենթակա գործունեության տեսակ:

**Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին** ՀՀ օրենքը (2005) սահմանում է ՀՀ-ում տեխնիկական անվտանգության ապահովման իրավական, տնտեսական, սոցիալական հիմքերը, տեխնիկական անվտանգության ապահովման համակարգը և կարգավորում է տեխնիկական անվտանգության ապահովման հետ կապված հարաբերությունները: Սույն Օրենքի հոդված 6<sup>ի</sup> համաձայն, ի թիվս այլոց, արտադրական վտանգավոր օբյեկտ են համարվում արտադրություններ կամ առանձին տեղամասեր, արտադրամասեր, արտադրական հրապարակներ, պահեստարաններ, տեղակայանքներ, տեխնոլոգիական սարքավորումներ կամ ցանկացած այլ օբյեկտ, որտեղ իրականացվում են հանքարդյունահանման, հորապայթեցման աշխատանքներ կամ աշխատանքներ՝ օգտակար հանածոների հանքահարստացման ուղղությամբ:

**Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին** ՀՀ օրենքը (2006) կարգավորում է ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները: Օրենքը դասակարգում է ՀՀ-ում հատուկ պահպանվող տարածքները. ա) ըստ նշանակության (միջազգային, հանրապետական և տեղական բնության հատուկ պահպանվող տարածքների) և բ) ըստ կատեգորիայի (պետական արգելոցի, ազգային պարկի, պետական արգելավայրի և բնության հուշարձանի):

Օրենքը նկարագրում է բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմները, պահպանության իրականացումը, օգտագործումը և վերահսկողությունը, սահմանում է պետական մարմինների իրավասությունները, ինչպես նաև բնության հատուկ պահպանվող տարածքներն օգտագործողների իրավունքներն ու պարտականությունները:

**Բուսական աշխարհի մասին (1999)** և **Կենդանական աշխարհի մասին (2000)** ՀՀ օրենքները սահմանում են ՀՀ բույսերի և կենդանիների պահպանության, պաշտպանության, օգտագործման, վերարտադրության ու կառավարման, ինչպես նաև կենսաբազմազանության վրա մարդկանց գործունեության ազդեցությունը կարգավորելու քաղաքականությունը: Այս օրենքների հիմնանպատակը բուսական/կենդանական աշխարհի և կենսաբազմազանության պահպանության

ապահովումն է: Այն նաև սահմանում է տեսակների՝ մասնավորապես էնդեմիկ և վտանգված, մոնիտորինգի և գնահատման ընթացակարգերը:

*«ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» թիվ 71-Ն և «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» №72-Ն ՀՀ կառավարության 29.0.2008-ի որոշումները սահմանում են ՀՀ բուսական և կենդանական աշխարհների հազվագյուտ, անհետացած ու անհետացող, կրճատվող, բնորոշ տեսակների կենսաբանությունը, թվաքանակը, տարածման վայրերը և ձևաբանությունը:*

*«ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 31.02.014 №78-Ք որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:*

*«Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի №1622-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001 թվականի ապրիլի 12-ի №286-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» №136Ն որոշումը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի (այսուհետ՝ բերրի շերտ) նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները՝ հանումը, տեղափոխումը, պահպանումը և հաշվառումը:*

*«Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ.-ի հուլիսի 20-ի №1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №140Կ ՀՀ կառավարության որոշումը սահմանում է հողի բերրի շերտի հանման նորմերը և հանված բերրի շերտի պահպանմանն ու արդյունավետ օգտագործմանը ներկայացվող պահանջները՝ հողային աշխատանքներ կատարելիս հողերի պահպանությունն ապահովելու, ցածր արդյունավետություն ունեցող հանդակների բերրիությունը բարձրացնելու և ռեկուլտիվացվող հողերի բերրիությունը վերականգնելու համար:*

*«Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» №96Դ ՀՀ կառավարության որոշումը սահմանում է ՀՀ երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական և կենսաբանական հուշարձանների ցանկը:*

*«Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին» №2322-Ն որոշման մեջ ներկայացված է ՀՀ Սյունիքի մարզի պատմամշակութային հուշարձանների ցանկը:*

Տնտեսական գործունեության հետևանքով մթնոլորտային օդի, ջրային և հողային ռեսուրսների վրա ազդեցության վնասի գնահատումը իրականացվում է՝

- ՀՀ կառավարության «Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատման և հատուցման կարգը հաստատելու մասին» №764-Ն որոշմամբ,
- ՀՀ կառավարության «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» №91-Ն որոշմամբ,
- ՀՀ կառավարության «Հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» №92-Ն որոշմամբ,
- ՀՀ կառավարության «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» №1110-Ն որոշմամբ:

## 6. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Հայաստանի Հանրապետության հարավարևելյան մասում, Սյունիքի մարզում, Քաջարան բազմաբնակավայր համայնքի վարչական տարածքում, Կապան մարզկենտրոնից դեպի արևմուտք 30կմ հեռավորության վրա: Կոմբինատի տարածքին համեմատաբար մոտիկ բնակավայրերն են՝ հյուսիսում՝ Գեղի, արևելքում՝ Լեռնաձոր, Անդրկավան գյուղերը և Կապան քաղաքը: Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (այսուհետ՝ ՉՊՄԿ) տարածքը՝ նախատեսվող գործունեության տարածքի նշագրմամբ ներկայացված է ստորև **Նկար 6.1**-ում:

Ինչպես արդեն նշվել է, սույն նախատեսվող գործունեության շրջանակներում պլանավորվում է իրականացնել՝

- 1) Նոր արտադրական պահեստի կառուցում,
- 2) Երկու օժանդակ շինությունների կառուցում:

Նոր արտադրական պահեստը և օժանդակ շինությունները կառուցվելու են "ՉՊՄԿ" ՓԲԸ-ին պատկանող արտադրական տարածքում: Գլխավոր հատակագիծը բերված է **Հավելված 1**-ում: Նախատեսվող գործունեության շինությունը զբաղեցնում է հետևյալ մակերեսները՝

- Արտադրական պահեստ - 554մ<sup>2</sup>,
- Օժանդակ շինություններ - 1301մ<sup>2</sup>:

### **Նկ. 6.1. "ՉՊՄԿ" ՓԲԸ-ի տարածքը՝ նախատեսվող գործունեության տարածքի նշագրմամբ**




### 6.1 Նոր արտադրական պահեստ

Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների հատակագիծը ներկայացված է ստորև **Նկար 6.2** -ում: Համաձայն այդ հատակագծի՝ արտադրական պահեստը **C-D, 1-22** առանցքներում ունի **24x114** իսկ **D-E, 7-22** առանցքներում՝ **32x85.5**մ չափսեր: **C-D** առանցքի երկարությունը **24** մ է, իսկ **D-E** առանցքինը՝ **32**մ: Ընդհանուր առմամբ արտադրական պահեստը զբաղեցնելու է **5544**մ<sup>2</sup> տարածք: Արտադրական պահեստը նախատեսված է, արտադրության ապահովման նպատակով՝ սպասարկաման համար անհրաժեշտ սարքավորումների պահման համար:


Պահեստը չջեռուցվող է: Պահեստի հիմքերը նախատեսվում է իրականացնել երկաթբետոնե կետային հիմքերով: Պահեստը նախագծված է շրջանակակապային ամրացման սխեմայի միջոցով: Շրջանակները լայնակի ուղղությամբ, իսկ կապերը՝ երկայնական ուղղությամբ: Շրջանակների կայունությունն ու երկրաչափական անփոփոխությունն ապահովելու համար նախագծվել են ուղղահայաց կապեր **1-22(C, D, E)** առանցքներով: Լայնակի շրջանակներն ունեն երկթևանի թռիչք՝ **24**մ (առանցքներ **C - D**) և **32**մ (առանցքներ **D - E**) թռիչքներով: Շրջանակի պարզունակները **24**մ և **32**մ բացվածքով հեծաններ են: Սյուները նախագծված են որպես երկնյուղ գրոցված երկտավրերից՝ **1100**մմ ճյուղերի լոկալ առանցքների հեռավորություններով: Սյուների և դրանց հիմքերի վրա հեծանի հենարանը կոշտ են: Արտաքին պատերը նախատեսված է իրականացնել **120**մմ հաստությամբ սենդվիչ տիպի պատի պանելներից (տես **Հավելված 2**): Տանիքը նախատեսված է իրականացնել **120**մմ հաստությամբ սենդվիչ տիպի ծածկի պանելներից: Տանիքը երկթեք է, նախատեսված է կազմակերպված արտաքին ջրահեռացում: Բնական լուսավորությունը ապահովելու համար պահեստի չորս կողմերից նախատեսվել են պատուհաններ: Հատակները հարթ են նախատեսված է իրականացնել երկաթբետոնից: Պահեստում նախատեսված են երեք հիմնական դարպասներ իրենց դռնակներով:

**Նկ. 6.2. Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների հատակագիծը**



Արտադրական պահեստը սարքավորված է երկու կամրջային ամբարձիչներով: Մեկ ամբարձիչը՝  $Q=20$ տ և երկրորդը՝  $Q=50$ տ բարձրացնող հզորությամբ: Ամբարձիչների շահագործման ռեժիմը **5K** է: Ամբարձիչների սպասարկման և շահագործման համար նախատեսված են մետաղական աստիճաններ և հարթակներ: Ենթամբարձիչային հեծանները եռակցված, կտորավոր են: Կռունկի լայնակի արգելակումը ընկալվում է կռունկի վերին գոտիով և փոխանցվում է պուլսերին լայնակի ուղղությամբ կռունկի կոշտ հենարանի շնորհիվ: Արտադրական պահեստի **A-B** և **1-22** առանցքներում ներկայացված է ստորև **Նկար 6.3** -ում:


**Նկ. 6.3. Արտադրական պահեստ**



**ա) արտադրական պահեստի լայնակ կտրվածքը**



**բ) արտադրական պահեստի հարկերը**



**գ) արտադրական պահեստի պատուհանների դասավորությունը**

## 6.2 Օժանդակ շինություններ

Աշխատանքային նախագծով նախատեսվում է նոր կառուցվող արտադրական պահեստին կից կառուվել 2 օժանդակ շինություններ, որոնց ներկայացված են **Նկար 6.2** -ում (նշված է կանաչ գույնով): Օժանդակ շինություններից մեկը՝ թիվ 1 օժանդակ շինությունը, ունի **945<sup>2</sup>**, իսկ մյուսը՝ թիվ 2ը, **356<sup>2</sup>** մակերես: Ընդհանուր առմամբ օժանդակ շինությունները ընդհանուր մակերեսը կազմում է **1305<sup>2</sup>**:


### Թիվ 1 օժանդակ շինություն

Օժանդակ շինություն թիվ 1-ը **A-B 1-20** առանցքներում **105.9** առանցքային չափսերով և **16** բարձրությամբ շինություն է: Օժանդակ շինություն թիվ 1-ը **A-B** և **1-20** առանցքներում առանձնացված է սեյսմիկ շովերով և բաժանված է հետյալ հասվածներով՝

- **A-B** և **1-4** առանցքներում չորս հարկանի է (ադմինիստրատիվ մաս),
- **A-B** և **4-10** առանցքներում չորս հարկանի է (պահեստային մաս),
- **A-B** և **10-16** առանցքներում երեք հարկանի է (պահեստային մաս),
- **A-B** և **16-20** առանցքներում երեկ հարկանի է (պահեստային մաս),
- **D-E** և **4-7** առանցքներում չորս հարկանի է (պահեստային մաս):

Օժանդակ շինությունը **A-B** և **1-20** առանցքներում ներկայացված է ստորև **Նկար 6.4** -ում:

### Նկ. 6.4. Թիվ 1 օժանդակ շինություն



Թիվ 1 օժանդակ շինությունն **A-B** և **1-4** առանցքներում չորս հարկանի է, որը նախատեսված է որպես վարչական (ադմինիստրատիվ) մաս: Յուրաքանչյուր հարկում գտնվում է սանհանգույց, աշխատասենյակներ, օժանդակ սենյակներ: Հարկերի կապը իրականացվելու է աստիճանավա-

նդակով որը նախատեսվում է իրականացնել մետաղական սանդղահեծաններով և երկաթբետոնե աստիճաններով:

Թիվ 1 օժանդակ շինությունը **A-B** և **5-10** առանցքներում չորս հարկանի է, որը նախատեսված է որպես պահեստային մաս: Հարկերի կապը իրականացվելու է մետաղական աստիճաններով: Չորրորդ հարկում նախատեսված է էլեկտրական **1.2** տ վերամբարձությամբ ամբարձիչ:

Թիվ 1 օժանդակ շինությունը **A-B** և **10-16** առանցքներում երեք հարկանի է, որը նախատեսված է որպես պահեստային մաս: Առաջին հարկում նախատեսված է **5** տ վերամբարձությամբ ամբարձիչ: Հարկերի կապը իրականացվելու է մետաղական աստիճաններով:

Թիվ 1 օժանդակ շինությունը **A-B** և **16-20** առանցքներում երկհարկանի է, որը նախատեսված է որպես պահեստային մաս: **16-19** առանցքներում նախատեսված է **10** տ վերամբարձությամբ ամբարձիչ: **16-19** առանցքները անջատված են **19-20** առանցքներից սեղվիչ տիպի պանելներից իրականացված պատով: Հարկերի կապը իրականացվելու է մետաղական աստիճաններով:

Օժանդակ շինությունը նախագծված է շրջանակակապային ամրացման սխեմայի միջոցով: Շրջանակները լայնակի ուղղությամբ, իսկ կապերը՝ երկայնական ուղղությամբ: Շրջանակների կայունությունն ու երկրաչափական անփոփոխությունն ապահովվելու համար նախագծվել են ուղղահայաց կապեր: Սյուների և սյուները հիմքերի վրա հեծանի հենարանները կոշտ են: Օժանդակ շինության հիմքերը նախատեսվում է իրականացնել երկաթբետոնե կետային հիմքերով: Հիմնակմախքը մետաղական է: Միջհարկային ծածկերը իրականացվելու են երկաթբետոնից: Արտաքին պատերը նախատեսված է իրականացնել **120**մմ հաստությամբ սենդվիչ տիպի պատի պանելներից: Տանիքը նախատեսված է իրականացնել **120**մմ հաստությամբ սենդվիչ տիպի ծածկի պանելներից: Տանիքը միաթեք է, նախատեսվել է կազմակերպված արտաքին ջրահեռացում: Բնական լուսավորությունը ապահովվելու համար նախատեսվել են պատուհաններ: Ծինությանը կից տեղադրված է արտաքին մետաղական աստիճանավանդակ՝ տանիք բարձրանալու և հարկերի մարդկանց տարահանումը ապահովելու համար:


**Թիվ 2 օժանդակ շինություն**

Թիվ 2 օժանդակ շինությունը **D-E** և **4-7** առանցքներում **3 1 x 1 1** և **5** առանցքային չափսերով և **16.5** բարձրությամբ շինություն է: Օժանդակ շինությունը քառահարկ է: Հարկերի կապը իրականացվելու է աստիճանավանդակով, որը նախատեսվում է իրականացնել մետաղական սանդղահեծաններով և երկաթբետոնե աստիճաններով: Չորրորդ հարկում նախատեսված է սանհանգույց: Ծինությանը կից տեղադրված է արտաքին մետաղական աստիճանավանդակ՝ ծառայելով տանիք բարձրանալու և հարկերի մարդկանց տարահանումն ապահովելու համար: Թիվ 2 օժանդակ շինությունը ներկայացված է ստորև **Նկար 6.5** -ում:

Արտադրական և օժանդակ շինությունների պատերի և տանիքի սենդվիչ պանելների հանգույցները, դրանց բնութագրերը, ինչպես նաև լայնական և երկայնական կտրվածքները ներկայացված են **Հավելված 2**-ում:



Նկ. 6.5. Թիվ 2 օժանդակ շինություն



### 6.3 Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կոնստրուկտիվ լուծումները

Նոր արտադրական պահեստի և օժանդակ շինությունների երկաթբետոնե կոնստրուկցիաների նյութը համապատասխանում են գործող ստանդարտների պահանջներին: **A500@ A240** ասի ամրանները իրականացվելու են **ГОСТ 340280 16** համաձայն: Ներդիր տարրերի իրականացման համար կիրառվելու են պողպատից գլոցվածքներ:

Նախատեսվում է երկաթբետոնե կոնստրուկցիաները իրականացնել **B20** դասի բետոնից: Հիմքի սալի բետոնապատման ժամանակ աշխատանքային կարերի մակերեսը լինելու է երկաթբետոնե պլանակալների առանցքին ուղղահայաց: Նոր արտադրական պահեստի և օժանդակ շինությունների հիմնակմախքը, որում նշված են վերջիններիս հիմքերի տեղադրքը ներկայացված է **Հավելված 4**-ում:

Ամրանաձողերի գործվածքային միացումները իրականացվել են **1.Պ1.5** մ տրամագծի մետաղալարով: Պաշտպանիչ շերտի հաստությունը ամրանաձողի ծայրից մինչև կոնստրուկցիաների արտաքին եզրը իրականացվելու է **25** մ հաստությամբ:

Պահեստը նախագծված է մետաղական շրջանակով և հատակագծով: Այն ունի **24x11** և **32x85** չափսեր և բաժանված է երկու թռիչքի՝ **24** մ (առանցքներ C-D) և **32** մ (առանցքներ D-E): Պահեստը նախագծված է շրջանակակապային ամրացման սխեմայի միջոցով: Շրջանակները լայնակի ուղղությամբ, իսկ կապերը՝ երկայնական ուղղությամբ: Շրջանակների կայունությունն ու երկրաչափական անփոփոխությունն ապահովելու համար նախագծվել են ուղղահայաց կապեր **1-22C, D, E** առանցքներով: Լայնակի շրջանակներն ունեն երկթևանի թռիչք՝ **24** մ (առանցքներ C-D) և **32.0** (առանցքներ D-E) թռիչքներով: Շրջանակի պարզունակները **24** մ և **32** մ բացվածքով հեծաններ են: Սյուները նախագծված են որպես երկնյուղ գլոցված երկտավրեթից՝ **1100** մ (C, E և D (16) առանցքներով) և **2000** մ (7-22 առանցքի երկայնքով) ճյուղերի լոկալ առանցքների հեռավորություններով:

Պահեստը սարքավորված է երկու կամրջային ամբարձիչներով: Մեկ ամբարձիչը՝ բարձրացնող հզորությամբ  $Q=200$ տ՝ C-D թռիչքում բարձրությունը  $+25.000$  մ կրկրորդը  $Q=50.0$ ՝ C-D թռիչքում բարձրությունը  $+25.000$  մ-ը թռիչքում սարքավորված է մեկ կամրջային ամբարձիչ բարձրացնող հզորությամբ  $Q=20.0$ տ բարձրությունը  $+25000$  մ ամբարձիչների շահագործման ռեժիմը **5K** է: Ենթաամբարձիչային հեծանները եռակցված են: Կռունկի լայնակի արգելակումը ընկալվում է կռունկի վերին գոտիով և փոխանցվում է սյուներին լայնակի ուղղությամբ կռունկի կոշտ հենարանի շնորհիվ:

### 6.3.1 Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ

Ելնելով նրանից, որ արտադրական պահեստի և օժանդակ շենքի տարածքում խմելու ջրի և կենցաղային կոյուղու ցանցեր չկան, ադմինիստրատիվ շենքում, որը գտնվում է թիվ 1 օժանդակ շենքում, նախատեսվում է տեղադրել  $2$  մ<sup>3</sup> ծավալով բաք և **CR 1S** տիպի պոմպ: Ջուրը բերվելու է ավտո: Բաքի և պոմպի համատեղ աշխատանքը ապահովում է ադմինիստրատիվ շենքի, ինչպես նաև **D-E** և **46** առանցքներում (տես **Նկար 6.5**) օժանդակ շինության խմելու ջրի պահանջները: Բաքը նախատեսված է Յօրվա խմելու ջրի անհրաժեշտ քանակի համար: **D-E** և **46** առանցքներում թիվ 2 օժանդակ շինության կենցաղային կոյուղու կեղտաջրերը ուղղվում են դեպի **D=2000** մմ, **H=3.0** մ կոյուղու հոր, իսկ ադմինիստրատիվ շենքի (օժանդակ շինություն 1) կեղտաջրերը ուղղվում են դեպի հորատման փոս: Ըստ անհրաժեշտության կեղտաջրերը դատարկվում են ասանիզացիոն մեքենաներով և հեռացվում դեպի մոտակա կենցաղային կոյուղու մաքրման կայան: Արտադրական պահեստի հակահրդեհային ցանցը ներկայացված է **Հավելված 3**-ում:

### 6.3.2 Էլեկտրամատակարարման համակարգ

Էլեկտրակայանքի լարումը **380/20** է, տեղակայված հզորությունը կազմում է **435** կՎտ, հոսանքը **75** Ա: Արտադրական պահեստում և օժանդակ շինություններում լուսավորությունը իրականացվելու է **ՕՍԿ-6** և **ՕՍԿ-9** տիպերի էլեկտրական վահանակներով և լուսադիոդային լուսատուներով: Էլեկտրակայանքի լարումը **380/20** է, լամպերի լարումը՝ **220**: Լուսավորության ղեկավարումը կատարվելու է էլեկտրավահաններից: Լուսավորության վահանակների խմբերի համարակալումը կատարվելու է ձախից աջ: Խմբային ցանցը կատարվելու է **BBΓԻԴ-1S** տիպի **3x25** և **3x4** կտրվածքներ ունեցող կաբելներով: Վահանակները տեղադրված են լինելու հատակից **1.6** մ բարձրության, անջատիչները՝ **1.5** մ-ի վրա, իսկ խցակի վարդակները՝ **0.8** մ-ի վրա: Նախագծում լուսավորության չափը, լուսատուների տեսակը և կաբելը ընդունված են ըստ **ПУЭ-2009**, համապատասխան սենյակի բնութագրի և նպատակի: Պաշտպանության հողանցումը կատարված է հատուկ անցկացված **PE** ջղի միջոցով:

### 6.3.3 Անվտանգության ապահովում

Նախագծված օբյեկտում վթարային իրավիճակները կարող են կապված լինել արտաքինից վթարների, էլեկտրաէներգիայի անջատումների, սարքավորումների խափանումների, հրդեհների և երկրաշարժերի հետ: Բոլոր էլեկտրական սպառիչները հուսալիության և անխափան մատակարարման տեսանկյունից պատկանում են **II** և **III** կատեգորիաներին: **II** կատեգորիայի համար սնուցման աղբյուրներից մեկից էլեկտրամատակարարման խափանումների դեպքում թույլատրվում են էլեկտրամատակարարման ընդհատումներ այն ժամանակի համար, որն անհրաժեշտ է պահեստային սնուցման աղբյուրը միացնելու համար: **III** կարգի ընդունիչների համար էլեկտրամատակարարումը կարող է ապահովվել մեկ էներգիայի աղբյուրից, պայմանով, որ էլեկտրամատակարարման ընդհատումները, որոնք անհրաժեշտ են էլեկտրամատակարարման համակարգի վնասված տարրը վերանորոգելու կամ փոխարինելու համար, չեն գերազանցում **1** օրը՝ արտակարգ իրավիճակներից խուսափելու համար:

Արտադրական պահեստում և օժանդակ շենքում շահագործման մեջ գտնվող տեխնիկական սարքերը հագեցած են ազդարարման միջոցներով, անհրաժեշտ հսկիչ-չափիչ սարքերով, ինչպես նաև ունեն գործող միջոցներ՝ գերձանրաբեռնվածությունից պաշտպանության համար:

Աշխատատեղերում բարձր աղմուկի դեպքում նախատեսվել են նաև լուսային ազդանշաններ: Ազդանշանների պայմանական նշանները տեղադրվելու են երևացող տեղերում:

Էլեկտրաէներգիայի անջատման կամ այլ պատճառներով սարքի կանգառի դեպքերում բոլոր էլեկտրաշարժիչների շարժաբեռները, որոնց ինքնագործարկումն անթույլատրելի է, ունենալու են դրանց ինքնագործարկումը կանխարգելող սարք՝ էլեկտրաէներգիայի հաղորդման վերականգնման դեպքում:

#### 6.4 Սանիտարապաշտպանիչ գոտի

Համաձայն ՀՀԾՆ 3104.012024 Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգումէ ՀՀ շինարարական նորմերի՝ նախատեսվող գործունեության սանիտարապաշտպանիչ գոտի է ընտրված ՀՀԾՆ 3104.012024 128, Սանիտարատեխնիկական, տրանսպորտային և ինժեներական ենթակառուցվածքներ, սպորտի, առևտրի և սպասարկման ծառայությունների մատուցման օբյեկտներէ բաժնի V-րդ դասի, պահման կարգավորող ռեժիմներ չպահանջող, մասնագիտացված, բազմաֆունկցիոնալ պահեստներ՝ սկսած 300քմ մակերեսիցէ կետը, որի համար սահմանված է 50մ սանիտարապաշտպանիչ գոտի: Գծապատկերը բերված է ստորև՝ **Նկար 6.6**-ում:

**Նկ. 6.6.** Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների սանիտարապաշտպանիչ գոտին



**Նկար 6.6**-ում կարմիր գույնով ներկայացված սահմանը դա արտադրական պահեստի տարածքն է, իսկ կանաչովը՝ դրա սանիտարապաշտպանիչ գոտին: Ինչպես երևում է **Նկար 6.6**-ից՝ արտադրական պահեստի սանիտարապաշտպանիչ գոտին արևմուտքից, հյուսիսից, արևելքից և հարավից գտնվում է "ՉՊՄԿ" ՓԲԸ-ին պատկանող արտադրական տարածքում:

**6.5 Արտադրական և օժանդակ շինությունների կառուցման նյութածախսը**

Արտադրական և օժանդակ շինությունների կառուցման ընթացքում ծախսվող նյութերի և կատարվող աշխատանքների ծավալները ներկայացված են ստորև **Աղյուսակ 6.1**-ում:

**Աղյուսակ 6.1. Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման համար պահանջվող նյութածախսը**

№	Աշխատանքի/գործընթացի անվանումը	Չափման միավոր	Արտադրական պահեստ	Թիվ 1 օժանդակ շինություն	Թիվ 2 օժանդակ շինություն	Ընդամենը
<b>1</b>	<b>Տարածքի նախապատրաստական աշխատանքներ</b>					
1.1	II կարգի գրունտի մշակում 1 մ <sup>3</sup> շերտի տարողությամբ էքսկավատորով կողալիցքով	մ <sup>3</sup>		478		478
1.2	Տեղափոխում բուլդոզերով լիցք մինչև 20 հեռավորությամբ	մ <sup>3</sup>		478		478
1.3	II կարգի գրունտի մշակում 1 մ <sup>3</sup> շերտի տարողությամբ էքսկավատորով, բարձում ավտոինքնաթափեր	մ <sup>3</sup>		3292		32923
1.4	Տեղափոխում լցակույտ 3 կմ հեռավորությամբ	տ / մ <sup>3</sup>		4280	32923	42800/32923
1.5	Լիցքի խտացում պնևմոզոդով մեկ հետքով 6 անցումով 30 մ շերտի հաստությամբ, ջրի տարածումով	մ <sup>3</sup>		478		478
1.6	Մակերևույթի համահարթեցում բուլդոզերով	մ <sup>2</sup>		1102		11024
	<b>Երթևեկելի մաս</b>					
1.7	Ավազակույծի շերտ 10 մ հաստությամբ	մ <sup>3</sup>		324		324
	<b>Կողամայթի կառուցում</b>					
1.8	Կողամայթի խճի նախապատրաստական շերտ 10 մ հաստությամբ	մ <sup>3</sup>		442		44.2
1.9	Կողամայթի իրականացում միաձույլ B15 դասի բետոնից	մ <sup>3</sup>		883		88.3
	<b>Թեքահարթակի կառուցում</b>					
1.10	Թեքահարթակների խճի նախապատրաստական շերտ 10 մ հաստությամբ	մ <sup>3</sup>		6		6
1.11	Թեքահարթակների իրականացում միաձույլ B15 դասի բետոնից	մ <sup>3</sup>		12		12
<b>2</b>	<b>Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցում</b>					
2.1	III կարգի գրունտի մշակում 0.65 մ <sup>3</sup> շերտի տարողությամբ էքսկավատորով կողալիցքով	մ <sup>3</sup>	760	220	260	1240
2.2	III կարգի գրունտի մշակում ձեռքով կողալիցքով	մ <sup>3</sup>	50	26	25	101
2.3	Գրունտի ետլիցք խրամաղու մեջ բուլդոզերով	մ <sup>3</sup>	80	20	20	120
2.4	Գրունտի ետլիցք ձեռքով տոփանումով	մ <sup>3</sup>	14	14	21	49

**"Չանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ" ՓԲԸ**

№	Աշխատանքի/գործընթացի անվանումը	Չափման միավոր	Արտադրական պահեստ	Թիվ 1 օժանդակ շինություն	Թիվ 2 օժանդակ շինություն	Ընդամենը
	<b>Հիմքերի իրականացում</b>					
25	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B75 դասի բետոնից	մ <sup>3</sup>	140			140
26	Բուտաբետոն	մ <sup>3</sup>	1000		307	1307
27	Երկաթբետոնե հիմքերի իրականացում	մ <sup>3</sup>	775	400	530	1705
28	Բետոն B15	մ <sup>3</sup>	96		150	246
29	Ցեմենտավազագին շաղախ	մ <sup>3</sup>	7	180	10	197
2.10	Ամրան	տ	54	145	200	399
2.11	Խարիսխահեղուսների տեղադրում Խհ- 1	տ	18			18
2.12	Ներդիր դետալների տեղադրում ՆՏ- 1	տ	3			3
	<b>Հիմնային հեծաններ</b>					
2.13	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B75 դասի բետոնից	մ <sup>3</sup>	9			9
2.14	Երկաթբետոնե հիմնային հեծանների իրականացում B20F100W4 դասի բետոնից	մ <sup>3</sup>	1976			19.76
2.15	Ամրան A240=8մ	տ	0519			0.519
2.16	Ամրան A5000=12մ	տ	182			1.82
	<b>Մետաղական կոնստրուկցիաներ</b>					
2.17	Սյուների մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	57 529	14 749	106	830.778
2.18	Հեծանների մետաղական կոնստրուկցիաներ մոնտաժում	տ	297			297
2.19	Կապերի մետաղական կոնստրուկցիաներ մոնտաժում	տ	9444	2019		114.636
2.20	Մետաղական կոնստրուկցիաների մակերևույթների նախաներկում ԴՓ-020 նախաներկով	մ <sup>2</sup>	30679	9237	2840	42774
2.21	Մետաղական կոնստրուկցիաների մակերևույթների ներկում հրակայուն ներկով	մ <sup>2</sup>	30679	9237	2840	42774
2.22	Վանդակամածի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում	տ	8796	15		102.963
2.23	Այլ մետաղական կոնստրուկցիաներ	տ		9237	2840	12077
2.24	Մետաղական կոնստրուկցիաներ մոնտաժում	տ		1718	5	22.18
2.25	Ենթամբարձիչ հեծանների մետաղական կոնստրուկցիաներ մոնտաժում	տ	9690			96.904
2.26	Ռելս KP-80	տ	2502			25.012
2.27	Տանիքի մոնտաժում սենդվիչ պանելներից 120 մմ	մ <sup>2</sup>	1223			12.273
	<b>Դռներ և պատուհաններ</b>					

**"Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ**

№	Աշխատանքի/գործընթացի անվանումը	Չափման միավոր	Արտադրական պահեստ	Թիվ 1 օժանդակ շինություն	Թիվ 2 օժանդակ շինություն	Ընդամենը
228	Պատուհանի բլոկ մետաղապլաստից խուլ մաս	մ <sup>2</sup>	13608			1367.08
229	Պատուհանի բլոկ մետաղապլաստից	մ <sup>2</sup>	2815			28.125
230	Դուռ ապակե մետաղապլաստ	մ <sup>2</sup>	12			12
231	Դարպասներ Մետաղական	մ <sup>2</sup>	26			2.6
	<b>Սալե հատակներ</b>					
232	Իճի նախապատրաստական շերտ	մ <sup>3</sup>		465	80	545
233	Բետոնե նախապատրաստական շերտ	մ <sup>3</sup>		211	234	255.1
234	Երկաթբետոնե սալի իրականացում	մ <sup>3</sup>		77		77
235	Ցեմենտավազային շաղախ	մ <sup>3</sup>		1.15	0.183	1.333
236	Ամրան	տ		67	253	92.3
	<b>Աստիճանավանդակ</b>					
237	Բետոնե նախապատրաստական շերտ	մ <sup>3</sup>		147	6	20.7
238	Աստիճանավանդակի իրականացում	մ <sup>3</sup>		0.045		0.045
239	Ամրան	տ		2	1.5	3.5
	<b>Առվակ</b>					
240	Առվակ իրականացում B15 դասի բետոնից	մ <sup>3</sup>		43		4.3
241	<b>Հենապատ</b>			41		4.1
242	Բետոնե նախապատրաստական շերտ	մ <sup>3</sup>		537		53.7
243	Հենապատ իրականացում B20 դասի բետոնից	մ <sup>3</sup>		0.376		0.376
244	Ամրան A240	տ		3541		3.541
245	Ամրան A500C	տ		2571		2.571
246	Ներդիր դետալների տեղադրում ՆՏ- 1	տ		0.3		0.3
	<b>Ցոկոլ</b>					
247	Բետոնե նախապատրաստական շերտի իրականացում B7.5 դասի բետոնից	մ <sup>3</sup>		1.4		1.4
248	Ցոկոլի իրականացում B15 դասի բետոնից	մ <sup>3</sup>		287		28.7
249	Ցոկոլի իրականացում B20 դասի բետոնից	մ <sup>3</sup>				
	<b>Հատակներ</b>					
250	Գրունտի տոփանում խճով	մ <sup>2</sup>		24		24
251	Բետոնե սալ B15 դասի 150մ	մ <sup>3</sup>		368		368
252	Հիդրոնեկուսացում պոլիէթիլային թաղանթ HDPE 40ՃM 132շերտով	մ <sup>2</sup>		264		264
253	Հարթեցնող շերտ ցեմենտավազային 30մ	մ <sup>2</sup>		160		160
254	Մամլոգրանիտ	մ <sup>2</sup>		104		104
255	Կերամոգրանիտ	մ <sup>2</sup>		287		287
256	Պոլիստերոլ 50մ	մ <sup>2</sup>		287		287

**"Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ**

№	Աշխատանքի/գործընթացի անվանումը	Չափման միավոր	Արտադրական պահեստ	Թիվ 1 օժանդակ շինություն	Թիվ 2 օժանդակ շինություն	Ընդամենը
257	Ջերմապաշտպանիչ սպունգային շերտ	մ <sup>2</sup>		3 195		3195
258	Գրունտի տոփանում խճով	մ <sup>2</sup>		308		30.8
259	Բետոնե նախապատրաստական շերտ	մ <sup>3</sup>		6 16		61.6
260	Բետոնե սալ B 15 դասի 20ՊՃ	մ <sup>3</sup>		935		935
261	Հարթեցնող շերտ 5Պմ երկաթայնացումով	մ <sup>3</sup>		13 27 1		138.271
<b>3</b>	<b>Էլեկտրամատակարարում և էլեկտրալուսավորություն</b>					
31	Բաշխիչ կետ 25Պ, 038յՎ, 80Վ խզիչով	հատ		1		1
32	Արկղ ուժային, 10Պ	հատ		1		1
33	Կաբել ուժային 066յՎ պղնձե ջղերով	մ		259		259
34	Կաբել ուժային պղնձե ջղերով	մ		135		135
35	Կաբել ուժային 066յՎ պղնձե ջղերով	մ		055		0.55
36	Լուսավորության վահանակ	հատ		9		9
37	Լուսատու լուսադիոդային ներկառուցվող	հատ		180		180
38	Լուսատու լուսադիոդային քառակուսի	հատ		27		27
39	Լուսատու լուսադիոդային ներկառուցվող	հատ		480		480
3.10	Տուփ ճուղավորման Y 197	հատ		40		40
<b>4</b>	<b>Ջրամատակարարում</b>					
41	Իսմելու ջրի խողովակաշար					
42	Փական Բy = 10կգ/ սմ <sup>2</sup> Մ32	հատ		40		40
43	Փական Բy = 10կգ/ սմ <sup>2</sup> Մ25	հատ		54		54
44	Փական	հատ		18		18
45	Մետաղապլաստե խողովակ	մ		114		114
46	Ջրի ծորակ	հատ		10		10
47	Ճկուն խողովակ լվացարանների համար	հատ		11		11
48	Ջրաչափ	հատ		1		1
49	Փիլտր	հատ		1		1
4.10	Եռաբաշխիչ փական	հատ		1		1
<b>5</b>	<b>Կենցաղային կոյուղի</b>					
51	Խողովակ ՍԻՄ	մ		115		115
52	Եռաբաշխիչ	հատ		27		27
53	Ամրակ	հատ		19		19
<b>6</b>	<b>Հակահրդեհային ցանց</b>					
61	Սողնակ շարժ. շափնդելով	հատ		6		6
62	Մետաղե հարթ եռակցվող կցաշուրթ	հատ		12		12
63	Խողովակներ	մ		5 10		510

№	Աշխատանքի/գործընթացի անվանումը	Չափման միավոր	Արտադրական պահեստ	Թիվ 1 օժանդակ շինություն	Թիվ 2 օժանդակ շինություն	Ընդամենը
64	Մետաղե խողովակների ներկումը յուղաներկով շանգամ	մ <sup>2</sup>	141	141		141
65	Հակահրդեհային հիդրանտ	հատ	12	12		12
66	Խողովակների ջերմամեկուսացումը սինթետիկ կապակցանյութով, ապակեբամբակյա սալերով	մ <sup>3</sup>	0.11	0.11		0.11
67	Այլումինե պատյանի սարքվածք δ=0.5մ	մ <sup>2</sup>	47	47		4.7

Վերը նշված **Աղյուսակ 6.1**-ի համաձայն ստորև **Աղյուսակ 6.2**-ում ամփոփված են արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման համար պահանջվող հողային և բետոնային աշխատանքները:

**Աղյուսակ 6.2. Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման համար պահանջվող հողային և բետոնային աշխատանքների ամփոփ**

Աշխատանքի/գործընթացի անվանումը	Չափման միավոր	Ամբողջ տարածքի հարթեցում	Արտադրական պահեստ	Թիվ 1 օժանդակ շինություն	Թիվ 2 օժանդակ շինություն	Ընդամենը
<b>Հողային աշխատանք</b>						
Ընդամենը հողային հանույթ	մ <sup>3</sup>	3340	810	246	285	3472
Ընդամենը հողի հետլիցք	մ <sup>3</sup>	478	94	34	41	647
Ընդամենը հողի տեղափոխում բացահանքի տարածք	մ <sup>3</sup>	3292	716	212	244	34095
<b>Բետոնային և երկաթբետոնե աշխատանքներ</b>						
Երկաթբետոն	մ <sup>3</sup>		795	400	680	1875
Բետոն	մ <sup>3</sup>	108	1149	116	457	1823
Ամրան	տ		563	229	228	512.1
Մետաղական կոնստրուկցիաներ	տ		1178	3012	2951	7141
Իսիճ	մ <sup>3</sup>	330		489	80	899
Ավազակոպնային շերտ	մ <sup>3</sup>	324				324

Վերը նշված **Աղյուսակ 6.2**-ի համաձայն՝ արտադրական և օժանդակ շինությունների կառուցման աշխատանքների արդյունքում հանվելու է **34742** մ<sup>3</sup> ավազակոպնային հող, որից հետլիցքի աշխատանքների համար օգտագործվելու է **647** մ<sup>3</sup>-ը, իսկ մնացած **34095** մ<sup>3</sup> ավազակոպնային հողը տեղափոխվելու է բացահանքի տարածք:



## 7. Այլընտրանքային տարբերակները, դրանց վերլուծությունը և ընտրված տարբերակի հիմնավորումը

Ստորև բերված **Աղյուսակ 7.1**-ում ներկայացված է նախատեսվող գործունեության իրականացման այլընտրանքային տարբերակների դրական և բացասական կողմերի վերլուծությունը, ինչի հիման վրա կատարվել է ամենանպատակահարմար տարբերակի ընտրությունը:

**Աղյուսակ 7.1. Այլընտրանքային տարբերակների դրական և բացասական կողմերի վերլուծությունը**

Գնահատման ենթակա ցուցանիշը	ՉՐՈՅՎԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ	ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ	ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ
	Առկա գործող պահեստների օգտագործում, առանց նոր պահեստի և օժանդակ շինությունների կառուցման	Նոր պահեստի և օժանդակ շինությունների կառուցում ՉՊՄԿ-ին պատկանող արտադրական այլ վայրում	Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցում ընտրված վայրում
Տեսողական ազդեցություն	Քանի որ գրոյական տարբերակի դեպքում նոր շինություններ չեն կառուցվելու, հետևաբար որևէ տեսողական ազդեցության փոփոխություն չի ակնկալվում: Մյուս կողմից, ներկայումս պահեստի համար նախատեսված տարածքում բացօթյա պահվում են արտադրության ապահովման և սպասարկման սարքավորումները, ինչը ընդհանուր առմամբ բացասական տեսք ունի:	Կախված կառուցման վայրի ընտրությունից, ազդեցությունը կարող է դիտվել և դրական և բացասական:	Ներկայումս պահեստի և օժանդակ շինությունների համար առաջարկվող տարածքը բաց հրապարակ է: Վերջիններիս կառուցման արդյունքում տարածքը ավելի կբարեկարգվի և տեսողական ազդեցության առումով կլինի դրական:
Աշխատանքի պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ	Աշխատանքի անվտանգության տեսանկյունից գրոյական տարբերակը ոչ մի փոփոխություն չի ենթադրում, քանի որ Կոմբինատում գործող աշխատանքի պաշտպանության, տեխնիկական և հրդեհային անվտանգության գործելակերպերն ու անվտանգության համակարգերը մնում են անփոփոխ:	Այս տարբերակը նույնպես փոփոխություն չի ենթադրում՝ աշխատանքի պաշտպանության և արտակարգ իրավիճակների կառավարման առումով:	Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցման ժամանակ Կապալառու կազմակերպությունից կպահանջվեն լրացուցիչ միջոցառումներ, միտված իր աշխատողների աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության պահանջների ապահովմանը: Քանի որ պահեստը ապահովված է լինելու սարքավորումների սպասարկման ժամանակակից տեխնիկայով, կարելի է փաստել, որ շահագործման փուլում աշխատանքի անվտանգության հետ կապված ռիսկերը կնվազեն:

**"Չանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ" ՓԲԸ**

Գնահատման ենթակա ցուցանիշը	ԶՐՈՅՎԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ	ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ	ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ
	Առկա գործող պահեստների օգտագործում, առանց նոր պահեստի և օժանդակ շինությունների կառուցման	Նոր պահեստի և օժանդակ շինությունների կառուցում ՉՊՄԿ-ին պատկանող արտադրական այլ վայրում	Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցում ընտրված վայրում
Շրջակա միջավայրի վրա ազդեցություն	Չրոյական տարբերակի դեպքում ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կմնա անվտանգ:	Այս տարբերակի ընտրության դեպքում շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակը կախված է լինելու նոր տարածքի ընտրության վայրից: Սակայն հաշվի առնելով այն, որ օգտագործվելու է նոր տարածք, որտեղ իրականացվելու են մեծածավալ հողային/փորման/ հարթեցման և այլ աշխատանքներ՝ այս տարբերակի ընտրությունը մեծ առումով բացասական է:	Շրջակա միջավայրի վրա ազդեցության առումով այս տարբերակը օպտիմալ է, քանի որ, պահեստը և օժանդակ շինությունները կառուցվելու են ներկա պահին առկա և օգտագործվող բաց արտադրական հրապարակի տարածքում, ինչը չի ենթադրում նոր տարածքի օտարում և նախապատրաստում:  Բացի այդ, նոր պահեստը և օժանդակ շինությունները հագեցած և կահավորված են լինելու բոլոր անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով, որի շահագործումը ավելի անվտանգ և արդյունավետ կլինի՝ հին պահեստների և օժանդակ շինությունների շահագործման հետ համեմատած:
Իրավական և հողօգտագործման պահանջներ	Իրավական և հողօգտագործման տեսանկյունից զրոյական տարբերակը ոչ մի ազդեցություն չի թողնում:	Այնուամենայնիվ այս տարբերակի ընտրության դեպքում արտադրական պահեստը և օժանդակ շինությունները կառուցվելու են ՉՊՄԿ-ին պատկանող արտադրական տարածքում, սակայն դա գուցե դրդվելու է նոր տարածքների օգտագործմամբ և հողային /փորման աշխատանքների իրականացմամբ:	Իրավական և հողօգտագործման տեսանկյունից այս տարբերակը ոչ մի ազդեցություն չի թողնում, քանի որ նախատեսվող գործունեության տարածքը պատկանում է ՉՊՄԿ-ին և նոր հողատարածքների օգտագործում չի ակնկալվում:
Սոցիալական և սոցիալ-տնտեսական ազդեցություն	Սոցիալական տեսանկյունից զրոյական տարբերակը չեզոք է, այսինքն չի թողնում որևէ ազդեցություն հանրության և հարակից բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա:	Սոցիալական տեսանկյունից այս տարբերակը նույալևս չեզոք է և չի թողնի որևէ ազդեցություն հանրության և հարակից բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա, բացառությամբ այն փաստի, որ կառուցման աշխատանքները հնարավորություն կտան	Սոցիալական տեսանկյունից այս տարբերակը նույալևս չեզոք է և չի թողնի որևէ ազդեցություն հանրության և հարակից բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա, բացառությամբ այն փաստի, որ աշխատանքները տևելու են մոտ 3 տարի, ինչը հնարավորություն կտա հարակից բնակավայրերի բնակիչներին ներգրավվել նոր արտադրական պահեստի և

	<b>ԶՐՈՅՎԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿ</b>	<b>ԱՅԼԸՆՏՐԱԿԱՆ ԲԱՑԻՆ ՏԱՐԲԵՐԱԿ</b>	<b>ԸՆՏՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ</b>
<b>Գնահատման ենթակա ցուցանիշը</b>	<b>Առկա գործող պահեստների օգտագործում, առանց նոր պահեստի և օժանդակ շինությունների կառուցման</b>	<b>Նոր պահեստի և օժանդակ շինությունների կառուցում ԶՊՄԿ-ին պատկանող արտադրական այլ վայրում</b>	<b>Արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցում ընտրված վայրում</b>
		հարակից բնակավայրերի բնակիչներին ներգրավվել նոր արտադրական պահեստի և օժանդակի շինությունների կառուցման աշխատանքներում՝ ստեղծելով նոր աշխատատեղեր:	օժանդակի շինությունների կառուցման աշխատանքներում՝ ստեղծելով նոր աշխատատեղեր:
Տեխնիկա-տեխնոլոգիական նպատակահարմարություն	Տեխնիկատեխնոլոգիական տեսանկյունից այս տարբերակը չունի որևէ ազդեցություն:	Տեխնիկատեխնոլոգիական տեսանկյունից այս տարբերակը չունի որևէ ազդեցություն, բացառությամբ նրա, որ այս տարբերակի ընտրությունը կենթադրի թվով և տեսակով նոր տեխնիկայի շահագործում՝ նոր տարածքի նախապատրաստման, հողային աշխատանքների իրականացման առումով:	Տեխնիկատեխնոլոգիական տեսանկյունից այս տարբերակը դրական է, քանի որ պահեստը կահավորվելու է նոր մեքենայացված տեխնիկայով, ինչը կհեշտացնի արտադրության սարքավորումների սպասարկումը:
Ֆինանսական ծախսեր	Ֆինանսական առումով ամենամատչելի տարբերակն է: Չի պահանջում էական ֆինանսական ծախսեր:	Նոր արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցումը նոր ընտրված վայրում կպահանջի ավելի մեծ ֆինանսական ներդրումներ:	Նոր արտադրական պահեստի և օժանդակ շինությունների կառուցումը կպահանջի ֆինանսական ներդրումներ, սակայն հաշվի առնելով, որ վերջինս կառուցվելու է արդեն իսկ օգտագործվող արտադրական տարածքում, այսինքն չեն ենթադրվում մեծածավալ հողային և հարթեցման աշխատանքներ, ֆինանսական ծախսերը կլինեն ավելի փոքր:

Այլընտրանքային տարբերակի իրականացումը, այն է՝ արտադրական պահեստի կառուցումը այլ վայրում, պահանջելու է նոր տարածքի հատկացում, զգալի հողային և հարթեցման աշխատանքների իրականացում, ինչպես նաև կարող է հանգեցնել տեսողական բացասական ազդեցության:

Ընտրված տարբերակը, այն է՝ արտադրական պահեստի կառուցումը այժմյան բաց հրապարակի տարածքում (տես **Նկար 6.1**), հնարավորություն կտա Կոմբինատին՝ հին պահեստների փոխարեն, շահագործել առդի ու նոր չափանիշներին հմապատասախանող պահեստ և օժանդակ շինություններ: Արտադրական պահեստը կունենա կատարելագործված և բարելավված աշխատանքի պաշտպանության, տեխնիկական և հրդեհային անվտանգության գործելակերպեր ու անվտանգության համակարգեր: Այս տարբերակի իրականացման համար հարկավոր չէ նոր

տարածքի օտարում և լրացուցիչ հողային աշխատանքների իրականացում: Քանի որ, արտադրական պահեստը նախատեսվում է կառուցել ներկայում օգտագործվող բաց հարթակի/հրապարակի վայրում, ուստի դա տեսողական ազդեցության տեսանկյունից դրական է, քանի որ բաց հարթակը/հրապարակի փոխարեն կլինի փակ ժամանակակից կառույց: Ինչ վերաբերվում է սոցիալ-տնտեսական զարգացմանը, ապա պահեստի կառուցման ողջ ցիկլի ընթացում աշխատանքներում ներգրավված է լինելու նոր աշխատուժ՝ ստեղծելով ժամանակավոր աշխատատեղեր տարածաշրջանի բնակիչների համար:

Հաշվի առնելով վերոնշյալ եզրահանգումները, նախատեսվող գործունեության ընտրված տարբերակը՝ թե շրջակա միջավայրի և թե հանրության անվտանգության տեսանկյունից դրական է, չնայած այն հանգամանքին, որ աշխատանքները կապահանջեն որոշ ֆինանսական ներդրումներ:

## 8. Շրջակա միջավայրի նկարագիրը

### 8.1 Տարածքի ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը


"ՉՊՄԿ" ՓԲԸ-ն բաց եղանակով շահագործում է Քաջարանի պղնձամուխրդենային հանքավայրը: Գործող բացահանքը գտնվում է Քաջարան քաղաքից **1.7-2.7** կմ հեռավորության վրա՝ Ողջի գետի աջակողմյան հատվածում: Հարստացուցիչ ֆաբրիկան գտնվում է Ողջի գետի ձախակողմյան հատվածում քաղաքի բնակելի հատվածից **300** հեռավորության վրա: Գործող Արծվանիկ պոչամբարը գտնվում է Արծվանիկ գետի կիրճում հարստացուցիչ ֆաբրիկայից **34.5** կմ հեռավորության վրա:

Ուսումնասիրվող տարածքը գտնվում է Չանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջերի վրա, Մեղրիի լեռնաշղթայից դեպի հյուսիս, Ողջի գետի վերին հոսքում:

Գիտարկվող տարածքին համեմատաբար մոտիկ բնակավայրերն են՝ Լեռնաձոր, Չագիկավան, Անդոկավան, Վերին Գիրաթաղ, Համլետավան, Գեղավանք գյուղերը, Քաջարան և Կապան քաղաքները:

Ուսումնասիրվող տարածքը և Սյունիքը ընդհանրապես բարձրալեռնային երկիր է՝ ՀՀ-ի ամենալեռնոտ մարզը (**Նկար 8.1**): Նրա ամենաբարձր (Կապուտջուղ՝ **3900**մ) և ամենացածր (Մեղրու կիրճ՝ **375**) կետերի բարձրությունների միջև եղած տարբերությունը (մոտ **3500**մ) գերազանցում է ՀՀ բոլոր մյուս մարզերի նմանատիպ ցուցանիշները: Մարզի միջին բարձրությունը ծովի մակարդակից **2200**է, իսկ առանձին լեռնագագաթները գերազանցում են **3000**

#### **Նկ. 8.1. Տարածաշրջանի ֆիզիկական քարտեզը**



### 8.2 Գեոմորֆոլոգիան, ռելիեֆը և լանդշաֆտը

Տարածաշրջանի մեծ մասը կազմում են ժայռերը, լեռնաշղթաները և խոր ձորերը: Արևմուտքում միջօրեականի ուղղությամբ Ամուլսարից մինչև Արաքսի անտեցեդենդային կիրճը ձգվում է Չանգեզուրի լեռնաշղթան: Լեռնաշղթան բաժանվում է հյուսիսային և հարավային մասերի: Հյուսիսային մասը ձգվում է Ամուլսարից Արամասար, ունի սինկլինալային կառուցվածք և համեմատաբար ցածր է (միջին բարձրությունը **2800**է): Արևելյան լանջերը համեմատաբար փոքրաթեք են, մասնատված Որոտանի վտակներով (աստիճանաբար իջնում են Որոտանի հովիտ): Արևմտյան լանջերն ավելի գառնաթափ են ու մասնատված Արաքսի վտակներով:

Տարածքի ռելիեֆը խիստ մասնատված է, նկատվում է տարածքի աստիճանական ցածրացում դեպի հարավ-արևելք և արևելք: Այդ ուղղությամբ էլ հոսում են մարզի գետերի զգալի մասը (Որոտան, Ողջի, Ծավ և այլն): Ծրջանի ռելիեֆը կառուցվածքային էրոզիոն-տեղատարումային տիպի է, V-աձև նեղ հովիտներով: Առաջացնող արտածին երևույթներից բնորոշ են ուժեղ ինտենսիվության սելավները<sup>1</sup>:

Հանքավայրի ծայրամասերը ներկայացված են տիպիկ բարձր լեռնային ռելիեֆով (բացարձակ նիշերը **180050**մ, իսկ հարաբերական բարձրությունների տարբերությունը **500700** է): Բարձրությունների անկումը բավական զգալի է և էապես վատթարացնում է վնասակար նյութերի ցրման պայմանները մթնոլորտում: Տեղանքի ռելիեֆի գործակիցը՝  $\eta = 1.73$ :

Հարստացուցիչ ֆաբրիկայի շրջանը լեռնագրական տեսանկյունից պատկանում է Պարսկական սարավանդին և գտնվում է Չանգեզուրի լեռնաշղթայի արևմտյան լանջի վրա, Ողջի գետի վերին հոսանքում: Գեոմորֆոլոգիական տեսակետից ֆաբրիկայի արտհրապարակն իրենից ներկայացնում է տիպիկ բարձր լեռնային գոտի խիստ կտրտված ռելիեֆով:

<sup>1</sup>Հայաստանի ազգային ատլաս: Հատոր Ա: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, "Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն" ՊՈԱԿ, Երևան, 200թ.


Բացհանքի և շրջապատող տարածաշրջանը ներկայացված են՝ լեռնային մարգագետնատափաստանային (2200-2600) բարձր լեռնային մերձալպյան (2400-2800) և բարձր լեռնային ալպյան (2800-3400) լանդշաֆտային գոտիներով (Նկար 8.3): ԶՊՄԿ-ի տարբեր տեղամասերը և շրջակա լանդշաֆտը ներկայացված են ստորև Նկար 8.2-ում:

Ֆաբրիկայի մոտակայքում ռելիեֆը սաստիկ կտրտված է, լեռնաշղթաների լանջերը զառիթափ են և շատ տեղամասերում գրկված են հողաբուսական ծածկույթից:

Նկ. 8.2. ԶՊՄԿ-ի տարբեր տեղամասերը և շրջակա լանդշաֆտը




Նկ. 8.3. Տարածաշրջանի լանդշաֆտների բարտեզը



### 8.3 Հողերի բնութագիրը

Ուսումնասիրվող տարածաշրջանին բնորոշ են լեռնամարզագետնային անտառային դարչնագույն հողերի տիպերը: Չանգեզուրի լեռնաշղթայում այս հողատիպը տարածված է հիմնականում **50-1700** մ. բարձրությունների վրա, իսկ հարավային դիրքադրության լանջերում դրանք հասնում են մինչև **2400** բարձրության, այդ թվում Քաջարան քաղաքի շրջակա տարածքներում: Տարածաշրջանի հողերի բնական տիպերի քարտեզ-սխեման ներկայացված է **Նկար 8.4**-ում:

Նկ. 8.4. Տարածաշրջանի հողերի բնական տիպերը



- ① Լեռնամարգագետնային ճմային խորքային - չհագեցած միջին հզորության կավավազային
- ② Լեռնամարգագետնային ճմային խորքային - չհագեցած փոքր հզորության կավավազային թույլ - միջին հողմահարված
- ③ Լեռնամարգագետնային ճմային քարածին բեկորային միջին հզորության կավավազային
- ④ Լեռնամարգագետնային թույլ ճմային քարածին բեկորային միջին հզորության կավավազային
- ⑤ Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային - չհագեցած միջին հզորության կավավազային
- ⑥ Մարգագետնատափաստանային տիպիկ մնացորդային - չհագեցած փոքր հզորության կավավազային թույլ - միջին հողմահարված
- ⑦ Դարչնագույն անտառային լվացված կավայնացված միջին հզորության
- ⑧ Դարչնագույն անտառային լվացված քարքարոտ փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված
- ⑨ Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված միջին հզորության կավային թույլ հողմահարված
- ⑩ Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված փոքր հզորության կավային թույլ հողմահարված
- ⑪ Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված միջին հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- ⑫ Դարչնագույն անտառային լվացված տափաստանացված միջին հզորության կավավազային միջին հողմահարված մշակովի
- ⑬ Դարչնագույն անտառային կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային
- ⑭ Դարչնագույն անտառային կարբոնատային տափաստանացված միջին հզորության կավային մշակովի
- ⑮ Դարչնագույն անտառային կարբոնատային տափաստանացված փոքր հզորության կավավազային թույլ հողմահարված մշակովի
- ⑯ Արմատական ապարների ելքեր և թերի զարգացած քարքարոտ հողեր

Տարածքում հողի աղտոտվածությունը որոշելու համար Կոմբինատի արտադրական օբյեկտների և նրանց սանիտարապաշտպանիչ գոտու տարածքներից կատարվել են նմուշառումներ՝

- Փաբրիկայի շրջակա տարածքներ (նմուշներ № **0 10 20 30 40 50 6**)
- Բացահանքի շրջակա տարածքներ (նմուշներ № **13 14 15 16 17 18**)
- , Արծվանիկէ պոչամբարի շրջակա տարածքներ (նմուշներ № **10 1 1 12**)

Հողանմուշների լաբորատոր փորձարկումների արդյունքների վերլուծության համաձայն ֆիզիկական կավ - ֆիզիկական ավազ լավագույն հարաբերությունը նկատվել է **0 40 50 6 10 11 12 15 1** ճմուշներում, իսկ համեմատաբար վատ հարաբերությունը՝ **0 10 20 31 31 7** նմուշներում: Առաջին շարքում ընդգրկված հողանմուշներն ըստ տեքստուրայի դասակարգման բնութագրվում են լավ, իսկ երկրորդ շարքում ընդգրկվածները՝ չափավոր վատ: Շատ քարքարոտություն նկատվել է **0 10 20 3, 13** նմուշներում: Գրեթե բոլոր հողանմուշներում նկատվել է բավարար զարգացած արմատային համակարգ և այն գնահատվել է միջինից լավ: Իսկ հողի կառուցվածքի առումով բարենպաստ հատկություններով օժտված են **10, 11, 12, 13, 14** և **18** հողանմուշները (պոչամբարների շրջակայք և բացահանքի սանիտարա-պաշտպանիչ գոտին): Ուսումնասիրված հողանմուշների **pH**-ը թույլ թթվայինից թույլ հիմնային է և տատանվում է **6.8**ից մինչև **7.78** Հումուսի պարունակությունը վերին **A** հորիզոնում տատանվում է **7.63-39**-ի սահմաններում:

Մոլիբդենի պարունակությունը ստուգիչ նմուշում, որը վերցված է ֆաբրիկայից **4**մ հեռավորության վրա, կազմել է **67 3**գ/կգ: Տարածքի հողերում մոլիբդենի բարձր պարունակությունները պայմանավորված են կենսատերկրաքիմիական պրովինցիային բնորոշ առանձնահատկությամբ: Համեմատ բարձր ֆոն գրանցվել է անմիջապես հանքի և ֆաբրիկայի հարակից տարածքներում: Ստուգիչ նմուշի հետ համեմատ մետաղների պարունակությունների զգալի տարբերություն նկատվել է պղնձի և բիսմութի համար, ինչը պայմանավորված է հանքանյութում վերջիններիս բարձր պարունակությամբ: Մետաղների պարունակության նկատելի փոփոխությունները հողանմուշներում ըստ ուսումնասիրվող տարածքների պատկերված է ստորև **Նկար 8.5**-ում:



**Նկ. 8.5. Մետաղների պարունակության նկատելի քանակական փոփոխությունները նմուշներում՝ ըստ տեղամասերի**

Քաղաղրիչ	Ֆաբրիկայի արտհրապարակ և հարակից տարածքներ						«Արժվանիկ» պոչամբարի շրջակայք			Բացահանքերի սանիտարա-պաշտպանիչ գոտի						Ստուգիչ
	01	02	03	04	05	06	10	11	12	13	14	15	16	17	18	
C <sub>o</sub>				■			■						■	■		
N <sub>i</sub>							■	■								
V				■	■								■	■		
C <sub>u</sub>	■	■	■	■	■	■					■		■	■	■	
Z <sub>n</sub>						■										
C <sub>r</sub>							■	■				■				■
A <sub>s</sub>					■		■									
S <sub>e</sub>				■												
S <sub>r</sub>				■		■				■	■		■			
M <sub>o</sub>			■	■	■	■									■	
A <sub>g</sub>	■	■			■	■										
C <sub>d</sub>					■						■					■
S <sub>n</sub>		■		■			■	■								■
S <sub>b</sub>	■				■	■					■		■	■	■	
B <sub>a</sub>	■			■		■				■	■		■	■		
P <sub>b</sub>	■										■					
B <sub>i</sub>	■	■	■	■		■					■		■	■	■	

**Նկար 8.5**-ից երևում է, որ մոլիբդենով հիմնականում աղտոտված է հարստացուցիչ ֆաբրիկայի արտհրապարակը: Ֆաբրիկայի տարածքի հողերը աղտոտված են նաև պղնձով, բիսմութով և մասամբ այլ մետաղներով: Ընդհանուր առմամբ առավել աղտոտված են եղել հարստացուցիչ ֆաբրիկայի (նմուշներ **0 1040506**)բացահանքի (նմուշներ **1 4,1 6,1 7,1 8**)շրջակայքի հողանմուշները, իսկ ոչ աղտոտված՝ **12**ը ("Արժվանիկ" պոչամբար):

Քաջարան քաղաքի ողջ տարածքում ինտենսիվ աղտոտվածություն գրանցված չէ; ծանր մետաղների բարձր պարունակություններով դաշտերը տեղայնացված են ֆաբրիկայի տարածքում, ինչպես նաև քաղաքի բնակելի տարածքից դուրս՝ դեպի արևմուտք ընկած տարածքներում: Քաջարանի հողատարածքների աղտոտման մակարդակը կարելի է դասել աղտոտման թույլ և մասամբ միջին մակարդակին:


Կոնկրետ նախատեսվող գործունեության տարածքի մոտակայքում **2024**վականի հողի որակի մոնիթորինգի տվյալները բերված է **Հավելված 8**-ում:

**8.4 Տեկտոնիկան, սեյսմակայունությունը, սելավա և սողանքաանվտանգությունը**

Տարածքի սեյսմատեկտոնական պայմանների գնահատման ընթացքում խիստ կարևորվում է ակտիվ խզվածքների ազդեցության գոտիների բացահայտումը և գրունտային պայմանների հաշվառումով սեյսմիկ վտանգի ելակետային արժեքների որոշումը: Տարածքների սեյսմիկ վտանգի վրա զգալի ազդեցություն են թողնում տեղի գրունտային պայմանները: Գրունտային պայմաններից կախված նրանց տատանումների ինտենսիվության փոփոխությունը որոշվում է հիմնականում շերտերի հզորությամբ, նրանց ֆիզիկամեխանիկական և առաձգական հատկություններով, ինչպես նաև գրունտային ջրերի մակարդակով:

Տարածքը մտնում է Սյունիքի սեյսմոակտիվ գոտու մեջ, որի գեոդինամիկայի բնույթը և սեյսմիկան հիմնականում պայմանավորված են ակտիվ խզման խախտումներով: Այստեղ զարգացած են հյուսիս-արևմտյան և ենթամիջօրեականային խզվածքների խախտման համակարգը: Մակերևույթի վրա Սյունիքի գոտին ներկայացված է Խուստուլի-Գիրաթաղի, Տաշտունի և Գեղիի երեք զուգահեռ խզվածքներով, որոնք վերահսկում են պղնձա-մոլիբդենային և բազմամետաղային հանքանյութի տարածաշրջանում բացառիկ դեր է կատարում Տաշտունի II կարգի խզվածքը, որը անցնում է ենթամիջօրեականային ուղղությամբ (հյուսիս-արևելյան տարածում) ք.Ագարակ - գ.Լիչք - Տաշտունի լեռնանցք - ք.Քաջարան - Որոտանի լեռնանցք: Խզվածքը վարնետրային տիպի է, իջված 5565՝անկյան տակ հյուսիս-արևելյան և բարձրացված հարավ-արևմտյան թևով (**Նկար 8.6**):

**Նկ. 8.6. Տարածաշրջանի խզվածքների քարտեզը**



Տարածաշրջանի սեյսմիկ, սելավա- և սողանքաանվտանգության նկարագիրը բերված է ստորև **Աղյուսակ 8.1**-ում, իսկ սողանքային քարտեզը ներկայացված է **Նկար 8.7**-ում:

**Աղյուսակ 8.1. Տարածաշրջանի սեյսմիկ, սելավա- և սողանքաանվտանգությունը**

Գործոնը	Նկարագիրը
Սելավավտանգավորությունը	Կարգը՝ 1-ին կարգ Հանախականությունը՝ ուժեղ Սելավաբերությունը՝ ուժեղ (15-35մ <sup>3</sup> /կմ <sup>2</sup> ) Տիպը՝ ցեխաքարային
Սեյսմիկ շրջանացումը	Գտնվում է Գրալանոց ուժգնության գոտում
Սողանքավտանգավորությունը	Բարձր վտանգավորության գոտի է: Առկա են խոշոր սողանքային տարածքներ՝ մի քանի ակտիվ օջախներով:

**8.5 Երկրաբանական կառուցվածքը**

Երկրաբանական տեսակետից տարածքը մտնում է Ալյա-Հիմալայան երիտասարդ ծայքավոր գոտու մեջ, որին բնորոշ են բարդ ու խայտաբղետ երկրաբանական և ջրաերկրաբանական պայմանները, լեռնակազմական ակտիվ գործընթացները և հրաբխային երևույթները:

Հարավային Սյունիքում գերակշռում են պալեոզոյի և պալեոգենի ներժայթուկ ապարները, միջին Սյունիքում՝ մեզոզոյի հրաբխածին-նստվածքային, պալեոգենի ներժայթուկ և հրաբխային ապարները, իսկ հյուսիսային Սյունիքում՝ նեոգենի լճային, պլիոցեն-չորրորդական հրաբխային ապարներ:

Տարածքի ամենահին գոյացությունները ներկայացված են մինչքեմբրիի և ստորին պալեոզոյի փոխակերպված ապարների ստվարաշերտով, որոնք ծածկված են վերին դևոնի հասակի շերտախմբով՝ ներկայացված խառնաքարերով, պորֆիրիտներով, քվարցիտներով, կրաքարերով և փայլարային թերթաքարերով: Ողջի գետի ձախափում (Փիրամզադագի լեռնաշղթայի ջրբաժան մասում) այդ նստվածքները ծածկված են ստորին էոցենի հրաբխային ապարներով, որոնք ներկայացված են մետամորֆիկ թերթաքարերով, պորֆիրիտներով՝ կրաքարերի, կավային թերթաքարերի և քվարցիտների շերտատուփերի առկայությամբ:

Չորրորդական ժամանակաշրջանը ներկայացված է դեյուվիալ և սառցադաշտային նստվածքներով: Ընդերքը կազմված է տարբեր տեսակի լավաներից, հիմնականում՝ բազալտներից: V-աձև հովիտների լանջերը ծածկված են դեյուվիով: Կան զգալի տեկտոնային խախտումներ: Գետերի ավազանները գրեթե ամբողջովին կազմված են ինտրուզիվ գոյացումներից՝ էոցեն-օլիգոցենի ժամանակաշրջանի գրանիտներ, գրանիտա-դիորիտներ, գրանիտա-սիենիտներ և մոնցոնիտներ: Հովիտների լանջերում տարածված են ժամանակակից դեյուվիալ և այուվիալ թույլ զարգացած նստվածքներ:

Չգալի տարածում ունեն տարբեր ինտրուզիվ ապարները, որոնք տարբերվում են ըստ հասակի և տեղադրման ձևերի: Ամենախոշորը Մեղրու պլուտոնն է, որը Հայաստանի սահմաններում ձգվում է Ողջի գետից մինչև Արաքս գետը: Քաջարանի հանքավայրը գտնվում է Մեղրու պլուտոնի մոնցոնիտների զանգվածի հյուսիսային կոնտակտի սահմաններում, Տաշտունի խզվածքի կախված կողում: Արևմուտքում հանքավայրի սահմանները անցնում են Տաշտունի խզվածքի գոտիով, իսկ հյուսիսում՝ հպումային եղջերաքարերի գոտիով: Արևելքում հանքային դաշտի սահմանը որոշվում է հյուսիս-արևելյան տարածման հանքայնացված կառուցվածքների մարմամբ: Հանքային դաշտը կազմված է մոնցոնիտային և պորֆիրանման գրանիտների ու գրանոդիորիտների ներժայթուկների, ինչպես նաև ստորին էոցենի հրաբխածին ապարներից: Երկու ինտրուզիվ զանգվածների միջև հպումը տեկտոնական է (Տաշտունի խզվածք): Ջրաերկրաբանական վիճակը տարածքում պայմանավորված է ռելիեֆի խիստ կտրատվածությամբ, լանջերի զառիթափությամբ, ինտրուզիվ ապարների գերակշիռ զարգացմամբ (ճեղքային տիպի ջրերի շրջապտույտով), ջրաբերուկների համեմատաբար աննշան հզորությամբ և բուսական խիտ ծածկույթի բացակայությամբ: Այս գործոնները բերում են մակերևութային ջրահոսքի ավելացմանը և ստորերկրյա ջրերի սահմանափակված ձևավորմանը:

## 8.6 Հիդրոերկրաբանական պայմանները

Ինչպես նշվել է, շրջանի հիդրոերկրաբանական կառուցվածքը պայմանավորված է ռելիեֆի խիստ կտրատվածությամբ, լանջերի զառիթափությամբ, ինտրուզիվ ապարների գերակշիռ զարգացմամբ (ճեղքային տիպի ջրերի շրջապտույտով), ջրաբերուկների համեմատաբար աննշան հզորությամբ և բուսական խիտ ծածկույթի բացակայությամբ:

Մթնոլորտային տեղումները արագ հոսում են լանջերով, չհասցնելով ծծանցվել լեռնային ապարների մեջ: Դեռ ավելին, լեռնային զանգվածի ջրակլանման հատկությունները չափազանց փոքր են, իսկ խզվածքային խախտումները մեծամասամբ լցված են շփման կավերով, որոնք ավելի շատ ջրամերժ էկրաններ են, քան ջրաբերուկ գոտիներ: Քաջարանի հանքավայրի տարածքի սահմաններում ապարների ջրավորվածությունը հիդրոերկրաբանական ցանցի հենքից մինչև վերև աննշան է:

Մյուս կողմից, մթնոլորտային տեղումների մեծ քանակությունը և կլիմայի խոնավությունը նպաստում են ստորերկրյա ջրերի առաջացմանը՝ հիմնականում մթնոլորտային տեղումների անմիջական ներծծանցման շնորհիվ<sup>2</sup>:

Շրջանի արմատական ապարներում զարգացած են ճեղքա-գրունտային և ճեղքա-երակային ջրերը, վերնագետնաջրերը, գրունտա-ձակոտինային ջրերը ջրաբերուկային գոյացություններում և գրունտային ջրերի հորիզոնը գետերի հովիտների այլուվիալ նստվածքներում:

Հանքային դաշտում նկատված ստորերկրյա ջրերը, ըստ պարփակող ապարների լիթոլոգիական առանձնահատկությունների, շրջապտույտի բնույթի և, մասամբ, քիմիական կազմի, բաժանվում են երկու հիմնական տիպերի.

**Ջրաբերուկային գոյացություններում մակերեսային շրջանառության ջրեր**

Այդ ստորերկրյա ջրերը իրենց հերթին ստորաբաժանվում են հետևյալ տեսակների՝

- Ջրեր դեյուվիալ նստվածքներում, բաշխվում են առանձին ոսպնյակների կամ հոսքերի տեսքով: Այդ ջրերի ելքերը մակերևույթում ունեն խմբային դասավորություն, աղբյուրների դեբիտը աննշան է և ոչ հաստատուն: Ամենամեծ ջրավորվածությունը դիտվում է Ողջի գետի կիրճի ձախ լանջի վրա, որտեղ գերակշռում են ավազաքարերը և խիճ-խճավազային նստվածքները:
- Ջրեր այլուվիալ (ենթահունային) նստվածքներում, զարգացած են գետերի դարավանդներում, ողողահունային և առաջին վերողողահունային դարավանդներում: Գրունտային ջրերը գտնվում են **15-20**մ խորության վրա: Գրունտային ջրերի լճակի հիպսոմետրիկ տեղադրումը բավականին մոտ է ջրագծի նիշին:
- Ջրեր հին չորրոդական դարավանդային նստվածքներում (Ողջի գետի աջ ափ):

Հիդրոերկրաբանական և հետախուզական հորատանցքերը ցույց են տալիս, որ էյուվիալ-դեյուվիալ նստվածքների տարածման ամբողջ մակերեսում առկա են ջրատար հորիզոններ՝ **0.18-0.56**վրկ ջրի տեսակարար ելքով: Ստորգետնյա ջրերի հայտնաբերման խորությունը **5**ից մինչև **8**մ է, երբեմն **10.6**: Քաջարանի հանքավայրի շրջանում Ողջի գետի հունի լայնությունը հասնում է **100**: Հունը լցված է գլաքար-խճաքարային նստվածքներով, որոնք ամբողջ հզորությամբ (մինչև **50**մ) ջրավորված են: Ջրի մի մասը ներծծվում է տակի արմատական ապարների մեջ, իսկ մյուս մասը դիտվում է որպես տակի գրունտային հոսքեր, **0.540**մ խորությամբ: Առավելագույն դեբիտը մինչև **28**մ խորանալիս՝ **56**լ/վրկ է (հորատանցք թիվ **62**):

**Խորը շրջանառության ջրեր - ինտրուզիվ ապարներում ճեղքային ջրեր**

Հրաբխային ապարները, որոնց ձակոտկենությունը **1.5**% է, գործնականորեն անջրանցիկ են: Ինտրուզիվ ապարների ջրակալումը սահմանափակված է ընդհանուր ճեղքավորվածությամբ: Ճեղքերը պայմանավորված են հողմնահարմամբ և տեկտոնական գործընթացներով: Մթնոլորտային տեղումները, կուտակվելով ճեղքերում, առաջացնում են ոչ մեծ անճնշում ջրային հոսքեր: Ճեղքային ջրերը զարգացած են շատ սահմանափակ: Հանքավայրի ճեղքային ջրերը չեզոք են կամ թույլ հիմնային ( $pH=7.07-8$ )այդ պատճառով առանձին մետաղների պարունակությունը նրանց մեջ աննշան է<sup>3</sup>:

<sup>2</sup>ՉՊՄԿ՝ ՓԲԸ. Կոմբինատի ընդլայնում, հանքաքարի արդյունահանման արտադրողայկանությունը հասցնելով մինչև **125** մլն. տ/տարի, Բացահանքային տնտեսություն նախագիծը, Աշխատանքային նախագիծ, թիվ **46 01**,"Լեռնամետալուրգիայի ինստիտուտ" ՓԲԸ, Երևան, **2008**.

<sup>3</sup>Карапетян А.И., Каплянян П.М., Галстян А.Р. и др. Рудничные воды территории Армянской ССР, Сводный отчет по работам **1984**г., Институт геологических наук АН Арм. ССР, Ереван, **1984**г.

Խորը շրջանառության ջրերի մեջ առանձնանում են հանքայնացված ածխաթթվային ջրերը, որոնք կապված են, գլխավորապես, Տաշտունի խզվածքի հետ<sup>4</sup>: Ջրերի դեբիտը մեծ չէ, **002 018**/վրկ, ջերմաստիճանը՝ **45-12C**: Ըստ քիմիական կազմի այս ջրերը հիդրոկարբոնատ-սուլֆատ-մագնեզիում-կալցիումային են, մինչև **50**մգ/լ հանքայնացմամբ: Հանդիպում են նաև քաղցրահամ ջրերի աղբյուրներ, որոնց դեբիտը նույնպես մեծ չէ, **04032**/վրկ, ջերմաստիճանը՝ **57C**:

Հանքային են համարվում այն ջրերը, որոնց կազմը ձևավորում են բացահանքի աստիճանների վրա: Ոչ մեծ մակերևութային առվակները ձևավորվում են զանգվածի սահմաններում և ջրաքաշվում բացահանք: Բացահանքային ջրերը էապես կարբոնատային են, **pH**-ը միջինը **74**է, հանքայնացումը՝ **17500**մգ/լ: Հոսող գետնաջրերի և տեղատարափների առավելագույն հնարավոր հոսքը գործող բացահանք կազմում է **200**<sup>3</sup>/ժ, իսկ միջինը՝ **120 60**<sup>3</sup>/ժ:

Քաջարանի հանքավայրի բոլոր ստորգետնյա ջրերը, այդ թվում և հանքային ջրերը, իրենց քիմիական բաղադրությամբ վերաբերվում են հիդրոկարբոնատ-կալցիումային աննշան հանքայնացված ջրերին: Բաց լեռնային աշխատանքների ընթացքում ավելանում է ստորգետնյա ջրերի հանքայնացումը և համապատասխանաբար աճում է բոլոր հիմնական բաղադրիչների պարունակությունը:

Շրջանի հիդրոերկրաբանական առանձնահատկություններն են՝ խիտ հիդրոգրաֆիկ ցանցը, մակերևութային ջրերի մշտական բնույթը և դրանց մոտիկությունը ստորերկրյա ջրերին: Շրջանի մակերևութային, ստորգետնյա և հանքային ջրերն իրենց քիմիական կազմով նույնատիպ են, մոլիբդենի առկայությունը բնորոշ է բոլոր տիպի ջրերին, ընդ որում նկատվում է ուղղակի կախվածությունը ջրերում պարունակվող մոլիբդենի և սուլֆատների միջև<sup>5</sup>:

### 8.7 Մակերևութային ջրեր

Տարածաշրջանի հիմնական ջրային արտերիան Ողջի գետն է, իր մշտական և ժամանակավոր վտակներով: Ողջի գետը Արաքս գետի ձախափնյա վտակն է և համարվում է իր մեծությամբ Չանգեզուրի երկրորդ գետը, Որոտանից հետո: Ողջի գետը սկիզբ է առնում Կապուտջուղ հարավարևելյան լանջից **350**մ բարձրության վրա, Կապուտջուղ և Քաջարան գետերի միացումից և թափվում է Արաքս գետ ձախ ափից **350** բարձրության վրա:

Ողջի գետի ավազանին բնորոշ է ապարների թույլ ջրանցիկություն, այդ իսկ պատճառով մթնոլորտային տեղումները բերում են մակերևութային հոսքի առաջացմանը, ինչի արդյունքում գետի ավազանը ունի զարգացած ջրագրական ցանց: Ողջին տիպիկ լեռնային գետ է, նեղ ոլորապատույտ հունով, հոսքի մեծ արագությամբ և բազմաթիվ մանր վտակներով, որոնք իրենցից ներկայացնում են լեռնային առվակներ: Իր ճանապարհին Ողջի գետն ընդունում է մի շարք վտակներ՝ Սակքար, Սյական, Բաղաճաջուր, Դավազամի, Փխրուտ, Գեղի, Գիրաթաղ, Վաչազան, Արծվանիկ, Նորաշենիկ և այլն: Ողջի գետի խոշոր վտակներն են Գեղին և Նորաշենիկը, մյուս վտակները փոքր են՝ աննշան հոսքերով:

Ողջի գետ են թափվում նաև ժամանակավոր ջրահոսք ունեցող զգալի քանակի վտակներ, որոնք պարբերաբար բերում են իրենց հետ սելավային բնույթի ջրաքարային հոսքեր: Գետի սնուցումը խառն է, տեղի է ունենում մթնոլորտային տեղումների, հալվող և գրունտային ջրերի հաշվին, սակայն գերակշռում է հալոցքային սնուցումը (**60-70**%):

<sup>4</sup>ՉՊՄԿ՝ ՓԲԸ. Կոմբինատի ընդլայնում, հանքաքարի արդյունահանման արտադրողականությունը հասցնելով մինչև **125** մլն. տ/տարի, Բացահանքային տնտեսություն նախագիծը, Աշխատանքային նախագիծ, թիվ **46 01**:"Լեռնամետալուրգիայի ինստիտուտ" ՓԲԸ, Երևան, **2008**.

<sup>5</sup>ՉՊՄԿ՝ ՓԲԸ. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, Սյունիքի մարզի Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխություն (ներառյալ՝ արդյունահանման ծավալների փոփոխություն, ընդերքի տեղամասի ընդլայնում, թույլտվության ժամկետի երկարաձգում), Քաջարան - **2008**.

Բացահանքի տարածքով հոսում է Սակքար գետը իր Մյական վտակով: Սակքարը Ողջի գետի աջակողմյան վտակն է, որը թափվում է Ողջի գետ՝ Քաջարան քաղաքում: Այն սկիզբ է առնում Զանգեզուրի լեռնաշղթայի հարավ-արևելյան լանջերից, մոտ **32003300** բարձրությունից: Մինչև Քաջարան քաղաքը ձախ կողմից նրան է միանում Մյական վտակը, որն իր ամբողջ երկարությամբ անցնում է խորը ձորի միջով:

**Սակքար գետի հիդրոլոգիական բնութագիրը**

Հայալեռնիդրոմետի կողմից Սակքար գետի վրա հիդրոլոգիական դիտարկումներ չեն իրականացվել: Այդ իսկ պատճառով **Աղյուսակներ 8.2-8.5**-ում ներկայացվող հիդրոգրաֆիական և հիդրոլոգիական տվյալները ստացվել են հաշվարկային եղանակով: Հաշվարկային գետահատվածը վերցված է Մյական վտակի միախառնումից հետո:

**Աղյուսակ 8.2. Սակքար գետի հիդրոգրաֆիական և հիդրոլոգիական բնութագիրը**

Գետ	Երկարությունը, կմ	Ջրհավաք ավազանի մակերեսը, մ <sup>2</sup>	Հոսքի մոդուլը, Լ/վ-կմ <sup>2</sup>	Հոսքի շերտը, մմ
Սակքար (Մյականի միախառնումից հետո)	934	251	239	754

**Աղյուսակ 8.3. Սակքար գետի հիդրոգրաֆիական հաշվարկային բնութագրիչները**

Գետ	Հունի միջին լայնությունը, մ	Հունի միջին խորությունը, մ	Միջին արագությունը, մ/րկ	Տարեկան միջին ջերմաստիճանը, °C
Սակքար (Մյականի միախառնումից հետո)	35	027	062	63

**Աղյուսակ 8.4. Սակքար գետի հաշվարկային հիդրոլոգիական բնութագրիչները**

Գետ-Գիտակետ	Տարեկան բազամյա միջին ելքը, մ <sup>3</sup> /վրկ	Հոսքի ծավալը, մլն.մ <sup>3</sup>	Առավելագույն ելքը, մ <sup>3</sup> /վրկ	Բացարձակ նվազագույն ելքը, մ <sup>3</sup> /վրկ	Ամսական նվազ. ելքը 95% ապահով. դեպքում, մ <sup>3</sup> /վրկ
Սակքար (Մյականի միախառնումից հետո)	059	188	481	015	012

**Աղյուսակ 8.5. Սակքար գետի ամսական միջին հաշվարկային ելքերը, մ<sup>3</sup>/վրկ**

Տարեկան բազամյա միջին ելքը, մ <sup>3</sup> /վրկ	Միջին ելքերն ըստ ամիսների, մ <sup>3</sup> /վրկ											
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
059	016	017	074	125	156	173	052	018	018	019	021	019

**Ողջի գետը՝ իր Նորաշենիկ և Արծվանիկ ձախակողմյան վտակներով**

Ողջի գետի ընդհանուր երկարությունը կազմում է **86.0** կմ, ջրհավաք ավազանի մակերեսը՝ **1032** մ<sup>2</sup> է: ՀՀ տարածքում գետի երկարությունը **560** կմ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ **648** մ<sup>2</sup>, ջրհավաքի միջին բարձրությունը **2380** մետրի միջին ջրանկումը **0.68**, հոսքի գործակիցը՝ **0.61**:

Համաձայն երկարամյա դիտարկումների, Ողջի գետի միջին հոսքը Կապան դիտակայանի մոտ կազմում է **9.5** մ<sup>3</sup>/վրկ: Ջրի առավելագույն ծախսը դիտվում է մայիս-հունիս ամիսներին, իսկ նվազագույնը՝ հունվարին: Ջրի միջին ամսական նվազագույն ծախսը **95.0** ապահովվածության տարվա համար կազմում է Կապան քաղաքի մոտ **2.3** մ<sup>3</sup>/վրկ, Քաջարան քաղաքի մոտ՝ **0.734** մ<sup>3</sup>/վրկ: Հոսքի միջին արագությունը **0.65** մ/վրկ:

Ողջի գետի ավազանը սելավավտանգ է: Սելավային տարափային վարարումները դիտվում են **5-10** տարի մեկ, իսկ աղետային վարարումները՝ **2050** տարին մեկ անգամ:

ՉՊՄԿ-ի գործող պոչամբարը տեղադրված է Ողջի գետի ձախափնյա Արծվանիկ վտակի կիրճում, ինչի համար գետի հունը փոփոխված է: Պոչամբարի ազդեցության բացառման նպատակով գետի հոսքը ուղղվում է Ողջի գետ ջրհեռացման ջրանքի միջոցով: Արծվանիկ գետի երկարությունը **1 7** մ է, ջրհավաք մակերեսը **48** մ<sup>2</sup>, միջին անկումը՝ **5 0**‰: Գետի սնուցումը խառն է՝ հալոցքաանձրևային, գրունտային: Առավելագույն գետավարարումը՝ մայիս ամսին: Աշնանային տեղատարափները հաճախակի ստեղծում են կարճատև վարարումների գագաթներ: Մառցային ռեժիմը ձմռանը արտահայտնված է թույլ:

Պոչամբարի պարզվածքը ներկայումս թափվում է Նորաշենիկ գետ, որը միախառնվում է Ողջի գետի ջրերի հետ Կապան քաղաքի մոտ: Նորաշենիկ գետի երկարությունը **2 68** մ է, ջրհավաք ավազանի մակերեսը՝ **96 0** մ<sup>2</sup>, ջրհավաքի միջին բարձրությունը՝ **1 65 0** գետի միջին թեքությունը՝ **9**‰:

Ողջի գետի հետագոտվող գետահատվածքում հիդրոլոգիական մոնիտորինգը իրականացվում է **193 0** կան թվականներից: Տարբեր ժամանակներում Ողջի և Նորաշենիկ գետերի վրա իրակա-նացվել են հիդրոլոգիական դիտարկումներ արդյունքները բերված են **Աղյուսակներ 8.6-8.7**-ում:

**Աղյուսակ 8.6. Միջին բազմամյա ջրի ծախսի ներտարեկան բաշխումը, մ<sup>3</sup>/վրկ**

№	Գետ-դիտակետ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Միջին տարեկան
1	գ.Ողջի-ք.Կապան	195	286	512	120	2889	3155	2189	1079	593	723	536	334	114
2	գ.Նորաշենիկ-գ.Նորաշենիկ	034	041	107	273	258	163	079	043	060	064	055	038	103

**Աղյուսակ 8.7. Ողջի գետի և Նորաշենիկ վտակի ջրերի միջին բազմամյա տարիների տարեկան ծախսի հիմնական բնութագրերը**

№	Գետ-դիտակետ	Գետի հոսք					
		Ջրի միջին տարեկան ծախսը, մ <sup>3</sup> /վրկ	Գետի հոսքի մոդուլը, l/վրկ կմ <sup>2</sup>	Գետի հոսքի գործակիցը	Սեզոնային բաշխումը, %		
					III-VI	VII-XI	XI-II
1	գ.Ողջի-ք.Կապան	114	180	055	62	31	7
2	գ.Նորաշենիկ-գ.Նորաշենիկ	103	105	052	66	25	9

**2024** վականին նախատեսվող գործունեության տարածքի դիմացի հատվածից՝ Ողջի գետից վերցված ջրի որակի մոնիթորինգի տվյալները ներկայացված են **Հավելված 8**-ում:

**8.8 Կլիմա**

Տարածաշրջանի կլիման խոնավ է: Չմեռը ցուրտ է՝ թեթև քամիներով և օպտիմալ խոնավությամբ, հաստատուն ձյան ծածկույթով, տևում է բավականին երկար՝ **45** ամիս, սկսվում է նոյեմբերի կեսերից և շարունակվում մինչև ապրիլի կեսերը: Գարնանային ցրտահարություններ նկատվում են նաև մայիս ամսին: Աշնանային առաջին ցրտահարությունները նկատվում են հոկտեմբերի առաջին կեսին: Ամառը բավական տաք է, մեղմ, համեմատաբար խոնավ: Տարեկան ամենացածր տասնօրյակային ջերմաստիճանը լինում է դեկտեմբերին, հունվարին և փետրվարին: Այդ ընթացքում օդի հարաբերական խոնավությունը կազմում է **507 0**%, իսկ քամու միջին արագությունը՝ **1-3** մ/վրկ: Տարեկան ամենաբարձր տասնօրյակային ջերմաստիճանը լինում է

հուլիսին և օգոստոսին՝ **19.2 ԴC**, իսկ հարաբերական խոնավությունը՝ **4560%** Բարենպաստ օրերին քամու միջին արագությունը կազմում է **25.3**մ/վրկ:

**8.8.1 Ջերմաստիճանը**

Օդի ջերմաստիճանային ռեժիմի բնութագրերը բերված է **Աղյուսակ 8.8**-ում:

**Աղյուսակ 8.8. Օդի միջին ջերմաստիճանը 6**

